

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՈՆՔ ԵՒ ՄԵՐԻՆՆԵՐԸ

Միշտնորի Հերլա, որ Օտար Առաքելութեանց Պատուիրակներու Ամերիկեան Ընկերութեան, կամ, մեր մէջ աւելի ծանօթ անունովը, Պորաի պաշտօնական թերթն է, իր վերջին թիւերէն մէկուն մէջ մէկ քանի սողով կենսապրութիւնը կը հրատարակէ ամերիկացի կնոջ մը, հանդուցեալ տիկին Ալլէնի:

Տիկին Ալլէն ծնած էր Մէյնի Հէմպթըն քաղքին մէջ, 1828 նոյեմբեր 2ին, 1855 ին ամուսնացած էր Պատ. Օրսըն Բ. Ալլէնի հետ, եւ նոյն տարուան հոկտեմբեր 27ին երկուքը միասին Թիւրքիա գացած էին՝ իբր Պորաի միսիոնարներ: Քիչ մը ատեն իզմիր կեցան, յետոյ տարի մըն ալ խարբերդ, եւ 1858ի դարնան՝ վերջնապէս հաստատուեցան խարբերդ, Արեւելեան Թիւրքիոյ միսիոնարական կեդրոնը: Տիկին Ալլէն քոյրն էր հանգուցեալ տղթոր Գրոսսի Հոլլըրի, որ Եփրատ գոլէճին հիմնադիրը և առաջին տնօրէնը եղաւ, և որ միեւնոյն տարին իր կնոջը հետ եկած խարբերդ հաստատուած էր գործելու: Ալ իրենց ամբողջ կեանքը եւ վաստակը այդ քաղքին մէջ անցաւ: Վեց հօգի խումբ մը կը կազմէին իրենք, և ձեռք ձեռքի ու սիրտ սրտի խարբերդ աշխատեցան՝ իբր բառսուն տարի շարունակ: Ասոնցմէ Տըքթոր եւ Տիկին Պարնըմ տակալին խարբերդ են: Զարդերուն ատենը, 1895 նոյեմբերին, Պ. և տիկին Ալլէն կորսնցուցին իրենց տունը և բոլոր գոյքերնին, եւ տիկին Ալլէն հիւանդանալով, հաւատարիմ՝ հայ սպասաւոր մը գանի տեղէ տեղ փոխադրեց մինչեւ գոլէճին զլխաւոր շէնքը, ուր բիշ մը ատեն բնակեցաւ: 1896ի դարնան Ամերիկա վերադարձաւ:

Տիկին Ալլէն կը թողու երեք զաւակ, որոնք միսիոնարութեան «պաշտին» մէջ ծնած են: Երկրորդը հինգ տարի միսիոնար եղած է Վան. և երրորդը, Աննա, մէկ քանի տարի ուսուցչուհի եղած է Եփրատ գոլէճի աղջկանց վարժարանին մէջ:

Միշտնորի Հերլա իր տեղեկութիւնները կ'աւարտէ մէկ քանի խօսքով տիկին Ալլէնի նկարագրին մասին. «Միսիոնարութեան զաշտին մէջ՝ տիկին Ալլէնի յատկա-

նիշը եղաւ բանիմաց ու եռանդուն զործունէութիւն սը, միշտ այն ամուր հաւատքով թէ ամէն ճիշդ վերջ ի վերջոյ յաջողութեամբ կը պսակուի:»

Ինչ բնութանիք:

* * *

Ասոնց եւ ասոնց պէսներուն դէմ է որ իրենց սաղբանքները մութին մէջ կը կրկնապատկեն կ. Պորայ հայ հոգեւորականները: Այս զոհողութեան, անձնուիրութեան մարդերուն ու կիներուն դէմ է որ ակրայ կը կրճտեն մեր անշարժութեան ու բուսական կեանքի մէջ անբանացած կրօնաւորները, որոնք բա՛ն մը տուած չեն իրենց ազգին, արդէն տալիք բա՛ն մըն ալ չունենալով:

Մենք յարգանք ու հիացում միայն ունինք ամերիկեան միսիոնարներուն համար: Իրենց մտածելու եղանակները ամբողջովին մերը չըլլան թերեւ, բայց իրենց կատարած քաղաքակրթիչ գործին առջեւ՝ ազգին բարձրագոյն շահերուն գիտակցութիւնը ունեցող մարքի մը համար կարելի չէ երախտագիտութենէ ու սքանչացումէ տարբեր մտածում մը ունենալ:

Հայաստանի ու կիլիկիոյ մէջ Պորտ ընկերութեան կատարած գործը կէս պարէ ի վեր՝ մեր զարգացման մեծադոյն ու ազդուագոյն լծակներէն մին պիտի մնայ:

Վերջին վիճակագրութիւն մը՝ կրնայ մեզի գաղափար մը տալ այդ գործին ընդարձակութեանը վրայ:

Ամերիկեան Պորտը շորս մեծ գոլէճ կը պահէ Հայաստան ու կիլիկիա.

1. Այնթապ (կեդրոնական Թիւրքիոյ Գոլէճ), հաստատուած 1874ին, այժմ 140 աշակերտով, 2 ամերիկացի եւ 3 տեղացի ուսուցիչ:

2. Խարբերդ (Եփրատ գոլէճ), հաստատուած 1878 ին, այժմ 318 աշակերտով և 428 աշակերտուհիով (նախապատրաստական դասարաններն ալ հաշուելով), 2 ամերիկացի եւ 34 տեղացի ուսուցիչ:

3. Մարաշ (կեդրոնական Թիւրքիոյ գոլէճ աղջկանց համար), հաստատուած 1884ին, 30 աշակերտուհի, 3 ամերիկացի եւ 4 տեղացի ուսուցիչ:

4. Մարսուան (Անադոլիա Գոլէճ), հաստատուած 1886ին, 250 աշակերտ, 3 ամերիկացի եւ 9 տեղացի ուսուցիչ:

Պորաբ միանգամայն կը պահէ կ. Պորիս Իսակիտարի Աղջկանց ամերիկեան վարժարանը, հաստատուած 1891 ին, 137 աշակերտուհի, 7 ամերիկացի եւ 11 տեղացի ուսուցիչ:

Հաշուեցէք տարիներէ ի վեր այն արդիւնքը զոր տըւած են այս բարձրագոյն վարժարանները, — առանց հաշուելու նոյն մարմինն ձեռքով պահուած նախնական վարժարաններուն աւելի ընդարձակ օգուտները — , և տեսէք թէ մեր նոր հասնող սերունդները իրարու ետեւէ ի՞նչ կը պարտին այդ օտարներուն:

Անոնք մեզի եկած են այնպիսի ատեն մը ուր համապարփակ խաւարին մէջ կը խարխուփէինք: 1819ին արդէն եկած հաստատուած են Արեւմտեան Թիւրքիա, 1836ին՝ Արեւելեան Թիւրքիա, և 1847ին՝ Կեղրոնական Թիւրքիա: Ու այդ հեռուոր թուականներէն ի վեր, վհատիչ զգիտցող կամքով վը, ամէն արգելքներու դիմադրուելով, ամէն նախատինքներ կու տալով, ամէն զրկանք մոռնալով, ազնուօրէն ու արժանաւորապէս՝ քաղաքակրթութեան նախնական տարրերը բերած մտցուցած են մեր ընկերութեան կարգերուն մէջ, ու մեզի պէտք եղած մեծագոյն բարիքը, կրթութեան բարիքը առատաձեւում են մեզ: Տոներնին տեղերնին թողած, հանդիստնին արհամարհած, ծովեր ու ցամաքներ կարած ու եկած են, այդ հին թուականներուն, քաղաքակրթութեան անձանթ ու գծպէս ժողովրդի մը նուիրելու իրենց բոլոր կեանքը, այդ հեռուոր ու հերքումերձ անկիւնները թաղուելու եւ հոն մաքառելու ու ճգնելու ամէն չկամութիւններու դէմ:

Որովհետեւ, պէտք է զիտնալ, հաճելի կեանք մը չէ եղած միշտ իրենցը՝ Թիւրքիոյ մէջ: Անգլիացի ուղեւոր մը, Հէնրի Պարքէ, որ 1878ին Փոքր-Ասիա ու Հայաստան ճամբորդած է, իր գրքին մէջ չի կրնար իր զարմանքը ու դայրոյթը զտել այն խոնարհամտութեան համար որով այդ ամերիկացի միսիոնարները կը ներէին Հայերուն կողմէ իրենց եղած ամէնէն անարդ նախատինքներուն ու թշնամութիւններուն: Թալասի մէջ, ուր ուղեւորը կանգ առած է, հիացումով կը համակուի անոնց կատարած գործին հանդէպ: «Իրենց գործը ամէն բան է իրենց համար: Հայրենի աւանը՝ իր հանգստութիւններով, ընտանեկան կապերը, մտաւորական վայելքները, եւ նոյն իսկ արժանապատուութիւն, ամէն բան տեղի կուտայ «գործին» առջեւ, եւ անդամ մը անոր մէջ մխրձած մարդը ա՛յ իր հայրենիքը կամ բարեկամներուն մօտ պառնալու ամէն յոյս կը լքէ, բացի տասը տարին անդամ մը պզտիկ արձակուրդէ մը: ...Մեծապէս շահագրգռուեցանք իրենց վարած պարզ ու շարքաշ կեանքով, սքանչանալով այն վեհ անձնագոհութեան վրայ որ զիրենց մղած է ինքզինքնին նուիրելու Աւետարանը սորվեցնելու այս կողմերու բնիկներուն, կրթելով զանոնք ու աշխատելով բարձրացնել քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանի մը: ...Միսիոնարները եւ իրենց կիները դուրս ելլելուն պէս փողոցներուն մէջ իրենց կը կը հայհոյեն ամէնէն ստորին լեզուով, հայհուջներու կամ բարի կը բռնեն, եւ յաճախ կը պատահի որ այդ սիկինս

ները փողոցէն անցած ատեննին՝ տեղացիները աղտոյու-թիւններ նետեն իրենց, կամ կին մը կամ տղայ մը թըր-նեն իրենց երեսին:» Ու անգլիացին չի կրնար ըմբռնել թէ ի՞նչպէս տեղին միսիոնարը կը հանգուրժէ որ իր սիրուն նուրբ երիտասարդ կինը այնպիսի անարդ վարմունքի մը ենթակայ ըլլայ:

Մարդասիրական մեծ նպատակ մը ունեցած են բոլոր այդ մարդիկը ու բոլոր այդ կիները, ու անոր համար է որ ահա տարիներէ ի վեր աննուաճ կորստով մը կը տքնին մեր բարիքին համար:

* * *

Այս մարդերուն դէմ է որ իրենց փորին անվախճան յագեցումը մինակ փնտոյղ մեր եկեղեցականները կը համարձակին մութին մէջ աշխատիլ, առանց բնաւ խորհելու թէ հարուածը զոր անոնց պիտի տային՝ անոնց գլխուն վրայէն անցնելով պիտի երթար վիրաւորել բազմաթիւ Հայեր, որոնք իրենց մտաւորական մտնուղին հետ իրենց ապրելու հացն իսկ անոնցմէ կը ստանան յաճախ:

Միակ շարժումը որ կ'ընեն՝ իրենց ապուշ հայեցողութեանը մէջ անբանացած մեր կրօնաւորները, միակ յազնութիւնը որ հազար ճիւղերով յանձն կ'առնեն, ան ալ ի վնաս իրենց հօտին է:

Ո՛րչափ բազաւար պիտի ըլլայինք՝ եթէ այդ կրօնաւորները բնաւ փոխելու չելլէին մշտնջենական անշարժութեան կեանքը որ իրենցն է, եւ իրենց ճարպը աւելցնելու միակ, սիրական ու այլամերձ մտածուքէն անդին չանցնէին:

Թող ուտեն, խմեն, պառկին, հառաւնան ու արջանան: Ա՛յ ուրիշ բան չենք ուզեր իրենցմէ: Բայց միայն թէ թո՛ղ տան որ այն նիհար մարդիկը — դէր միսիոնար մը կ'երեւակայէ՞ք — իրենց արի, անխոնջ ու քաղաքակրթիչ գործը կատարեն մեր ծառանգաւորի եղբայրներուն զարգացմանը համար:

Պորտի ընկերութեան վարիչներէն մին վերջերս մեզի գրած մէկ նամակին մէջ, — որ դժբաղդաբար հրատարակութեան սահմանուած չէ՝ ամբողջութեամբը այս տեղ ներկայացնելու համար, բայց որուն մէկ քանի խօսքերը հարկ է գնել մերիներուն առջեւ — կ'ըսէր մեզի.

«Մենք Թիւրքիա կը գտնուինք՝ օգնելու համար Հայերուն իրենց բարոյական եւ մտաւորական կեանքին մէջ դէպի աւելի լայն, աւելի լաւ, աւելի ազնիւ բաներ: Մենք բողոքականութիւնը տարածելու համար չէ որ հոն ենք: Մեր փափաքն է օգնել Հայերուն որ դպրոցներ հաստատեն, որոնց միջոցաւ իրենց տղաքը կրթուած եւ՝ հետեւաբար՝ ուժով պիտի ըլլան: ...Մեր ջանքն է բարձրացնել Հայ ցեղը:»

Այս մտածումները ու այս առաջադրութիւնները ունեցող օտարականներուն համար մենք, կը կրկնեմ, եւ բախտագիտութեան ուրիշ զգացում՝ չունինք: Թող վստահ ըլլան ստոր, եւ անվկանդ շարունակեն գործերնին, թէ

պէտ արդէն այս խրատոյսին պէտք չունենան անոնք՝ երբեք չյուսահատելու համար իրենց մեծ գործին մէջ:

Իսկ մեր եկեղեցականները թող շարունակեն սուրբ իրենց լծացած անբաններու աշխատալի ու հեւացող մարդ, սողութիւնը, ձեռներն փորեհրուն վրայ: Մեծագոյն ծառայութիւնն է ասիկա որ կրնան երբեք մատուցանել մեզի:

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ե

Պ Ա Ր Ս Կ Ա Ն Յ Ա Յ Ո Յ Թ Ի Ի Ը

Անցեալին մէջ Պարսկահայերուն թիւը շատ աւելի ստուար է եղած, եւ իրենք ալ շատ աւելի բարգաւաճ ու ճոխ: Պարսկահայերուն թիւը կը շատնար ե Պարսկաստանի ներսերը հայկական նոր գաղութներ կը հիմնուէին Շահ-Աբբասի Արարատեան աշխարհէն բոնի քշած տարած Հայերով: Բիչ շատ պատմութեամբ հետաքրքրուողներուն ծանօթ է Սպահանի ե Նոր Զուղայի Հայերուն նիւթապէս եւ բարոյապէս դերակշիռ դիրքը ժԶ եւ ժԷ դարերուն: Ատրպատականի բնակիչներուն թիւը միայն՝ այսօրուան Պարսկահայերուն ամբողջ թիւին կրկնապատիկն էր:

Սակայն 1827-1828 զժբազղ թուականը, ուսպարսկական պատերազմին ընկերացող ազէաքններով, քայքայեց այդ ազգաբնակութեան տունը: Հայ ժողովուրդը, որուն գլուխ կանգնած էին Ներսէս կաթողիկոս Աշտարակեցին եւ զօրավար Լազար Լազարեանը, սխանաններով եւ ձիթենիներու ճիւղերով դիմաւորեց հիւսիսի զեղին զինուորները: Յոյսեր ծնած էին, ու ժողովուրդը խանդավառութեամբ կը փարէր անոնց, մտնալով արշաւող բանակներուն տակ սոսնակոխ եղած իր արիւնլուայ հայրենիքին անհուն ստոպանքները: Տրուած խոստումներու վրայ, կը հաւատար թէ ասոնք շուտով վերջ պիտի գտնէին, ե թէ քրիստոնեայ ազատարար զինուորները իրեն պիտի ապահովէին լաւագոյն օրեր: Ու բոլոր ուժովը, ամէն զօհողութիւններով, կը դիրացնէր արշաւող բանակներուն յասալխադացուը:

Շարժման առաջնորդներուն համար, հիասթափումը չուշացաւ: Արարատեան աշխարհի նորակազմ «ժամանակաւոր վարչութիւնը», որուն անգամներէն մէկն էր եւ Ներսէս Աշտարակեցին, շուտով կը լուծուը: Խոստումները անիրագործելի կը մնային, եւ ձարին ըրած միակ շընորհքը՝ կ'ըլլար իր տիազօններուն վրայ աւելցնել ե «Թագուոր Հայոց»: Ներսէս, կամքի ու կորովի այդ մեծ մարդը, դան վշտով մը համակուած կը հատնէր, ե մահ-

ուան անկողնին մէջ ձեռքը կուրծքին դրած կը մընջէր, «Հոս է իմ վիշտը, հոս է իմ ցաւը»: Հոն էր ձարին հըրովարտակը, որ անկենդան Հայրապետին խործրէն կը զողջուէր:

Բայց Ատրպատականի հողագործ ժողովուրդը, իրմալ ոչ միշտը թողած, նոր Աւեսեաց աշխարհ մը անցնիլ կ'երազէր: Պատմական երեւոյթ մըն էր որ նոյնութեամբ կը կրկնուէր այդտեղ. Շահ-Աբբասին վըրէմն էր որ կը լուծէր Ռուար նոյն ցուրտ, անողօք ու անխնայ հաշուով. սուժողը դարձեալ Հայն էր սակայն, ու այս անգամ հայ առաջնորդներու ձեռքով, որոնք կը սիւրէին իրենց ազգը, կը զուրգուրային անոր վրայ: Սալմաստի Խորայէլ եպիսկոպոսը միակ անձնաւորութիւնն է եղած այդ ատեն որ Պարսկահայերուն զաղթականութեան հակառակորդ կանգնած է. կը ձանձնար Ռուսի «նենգամութիւնը» — իր խօսքով — եւ կարեւոր թիւ մը ետ կը կեցնէր այս զաղթային շարժումէն: Ժամանակին զինքը հայրենիքի դաւաճան ու մասնիչ մը համարեցին, սակայն պատմութեան դատաստանը սրբան կը տարբերի իր մասին:

1827 հոկտեմբեր 12ին Ռուսերը, շնորհիւ հայ ժողովրդէն իրենց տրուած դիւրութեանցը, Արարատը ե Ատրպատականը դրուելէ յետոյ Թարիզ կը մտնէին: 1828 փետրուար 9ին Թիւրքմէնշայի (1) գաշնապարութիւնը կը կնքուէր, պատերազմին արդիւնքը վճռելով եւ զաղթականութեան որոշ պայմաններ դժելով: Գաղթականութիւնը կը սկսէր, այս անգամ դէպի ետ, ու նոյն ահաւոր տոաւն էր որ երեւան կուզար. փոխանակ Արարատի՝ Աւարայրն ու Ատրպատականն էին որ կ'ամայանային: Արաքսը իր ասփերուն վրայ կը տեանէր կրկնութիւնը նոյն աղբխարչ տեսարաններուն: Պարսկահայը յետագարձ ակնարկ մը կը նետէր իր բարեբեր դաշտերը, սակայն ալ ետ չէր կրնար դանուը. այս անգամ Պարսիկ սարպազին տեղ Հիւսիսի սալպան էր որ կը մղէր զինքը ամենի գետը անցնելու:

Գաղթականները ծայրայեղ թշուառութեան կը մատնուէին Արարատի մէջ, եւ շատ չանցած արցունքով կը յիշէին իրենց երկրի «ստին ու սխտորը»: Թէ ինչ էր անոնց քաշած ստոպանքը, ժամանակին վիճակագրական թիւը ամէն բան կը պարզէ: Ատրպատականէն միանուազ դաղթուողներուն թիւը 8249 ընտանիք էր կամ մօտաւորապէս 45,000 հոգի. երկու տարի յետոյ կատարուած կառավարական վիճակագրութիւն մը ցոյց կուտայ թէ անոնց թիւը իջած էր 6,946 բնտանիքի. որեմն երկու տարուան մէջ ազքատութեան եւ թշուառութեան զօհուած էին 1,303 ընտանիք կամ մօտաւորապէս 10,000 հոգի...

Պարսից լուծը նախընտրողները, որոնք մնացին իրենց հայրենի օճակին շուրջը, աւելի խաղաղ ու հանդիսակեանք մը ունեցան, մանաւանդ քաղաքացիները, աւելի անդորր ու ազատ ու եւ է հարկէ՝ բարգաւաճ վիճակի մը տիրացան:

(1) Թիւրքմէնշայ փոքրիկ դիւղ մըն է, Թարիզէն Թէհրան սանող ճամբուն վրայ:

Գաղթականութեան շարժումը վէպի Ռուսիա բոլորովին պայրեցաւ, միայն պանդուխտներու ահագին թիւ մը շարունակաբար թափանցեալ Կովկասի եւ վերջին ժամանակներս ալ Ռուսաստանի մէջ:

Հիմակ երբ Ատրպատականի մէջ ժողովուրդը իր հանդիստը կորսնցուցած է այն զանազան ներքին բայց մանաւանդ արտաքին պատճառներով որոնց մասին մանրամասնօրէն խօսեցայ այս ուսումնասիրութեան սկիզբի երկու յօդուածներուն մէջ, գաղթականութեան գաղափարը նորէն ծայր կուտայ ասդին անդին ու բիշ բիշ կը ծաւալի թաւրիզէն կարճ ժամանակի մը մէջ 30 տունէ աւելի գաղթած են, ու Սալմաստի հասարակութիւնը կը սպառնայ գաղթել՝ եթէ չվերահաստատուի նախկին անդորրութիւնը: Եւհը սիրալիր խօսքերով զանոնք կը հրաւիրէ «վտարահիլ կառավարութեան» բայց պարսիկ կառավարութեան խոստումներէն աւելի, Պարսկահայերը թող անցեալին դառն փորձերը իրենց աչքին առաջ ունենան եւ նային զէպի տաճկահայ գաղթականներուն դժբաղդ վիճակը թէ՛ իրենց շուրջը եւ թէ՛ մանաւանդ իրենց երագած Կովկասին մէջ, ուրիկ այն խեղճերը կը վտարուին այսօր, առանց օր մը հիւրասիրուած ըլլալու...

Ի ստորեւ կը ներկայացնենք Պարսկահայերուն ներկայ թիւը, քաղելով Ատրպատականի առաջնորդարանին պաշտօնական տեղեկագրէն, որուն վիճակագրական ցուցակը մեծ մասամբ կազմած է հանգուցեալ Մկրտիչ Աւետիսեան իր տեսչութեան ժամանակ, ամենաստոյգ աղբիւրներէ առաջնորդուելով: Աւետիսեան միանգամայն պատրաստած էր Ատրպատականի ձեռքիտ քարտէզ մը շատ մանրամասն, որ ցանկալի էր օր մը հրատարակուած տեսնել:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

	տուն	հոգի
Թաւրիզ կամ Գարէժ քաղաք	380	2,850
Շրջակայ երեք գիւղերը (Մուժուբար, Ալշամուլը եւ Սոհլուլ)	162	978
Սալմաստ (երեսուն գիւղ)	1,569	9,427
Խոյ (քաղաք եւ 7 գիւղ)	308	1,836
Ուրմի (քաղաք եւ 27 գիւղ)	739	4,314
Մաքու (քաղաք եւ 3 գիւղ)	209	1,226
Սուլտուլ (9 գիւղ)	120	691
Պարանտուլ (11 գիւղ)	203	1,251
Սօլուլպուլաք (4 գիւղ)	54	304
Միանտուլապ (5 գիւղ)	53	296
Մարաղա (քաղաք եւ 2 գիւղ)	190	896

ՂԱՐԱՏԱՂ (1)

Տիվար	գաւառ 8 գիւղ	358	2,270
Մէշափարա	» 6 »	153	946

(1) Ղարատաղի վիճակագրութիւնը կազմած է Սարաճեան սրբազան 97ին հոն կատարած ճամբորդութեանը ժամանակ: Ղարատաղ հին Փայտակարան նահանգին մաս կը կազմէ:

Մնձվան	գաւառ 4 գիւղ	90	382
Քէյվան	» 9 »	331	2,030
Արտապիլ քաղաք		31	220
Ատրպատականի զանազան անկիւնները		50	275
		5,200	30,392

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԷՆ ԴՈՒՐՍ

Եւր-Ջուլա (եօթը առանձին թաղերով)	800 (մօտ)	5,000
Թէհրան	450 (մօտ)	3,000
		1,250 8,000

Շիրազ, Պուշիւր, Սպահանի զանազան կողմերը, Ռաշա, Անգալի, Աստարա ցրուած եւ Պարսկաստանի այս ու այն անկիւնը գտնուած Հայերը միասին առնելով եթէ մօտաւորապէս 8,000 ընդունինք՝ Պարսկահայերուն ընդհանուր թիւը 50,000ը կ'անցնի, որուն ամենաստուար մեծամասնութիւնը, ինչպէս տեսանք, կեղորոնացած է Ատրպատականի մէջ:

Այս թիւին վրայ վերջին տարիներս կարելի էր յաւելու մը ըրած են գաղթականները:

Տաճկահայաստանի վերջին դժբախտ վէպերէն յետոյ, մանաւանդ 96ի Վասպուրականի արիւնոտ օրերէն վերջ, Վասպուրականցի, մեծ մասամբ Աղբակցի, գիւղացիներ թողած իրենց տունն ու տեղը՝ իրենց զրացի պարսկահայ գիւղացիին հիւր կը դառնային: Սալմաստի մէջ գաղթականութեան նոր բոյն մը կը հաստատուէր հայրենի հողէն ոչ այնքան հեռու: Սալմաստ անման հիւրասիրութիւն մը ցոյց տուաւ իր թշուառ եղբայրներուն, եւ թաւրիզի կանանց Բարեգործական ընկերութիւնը ամէն կերպ նիւթական օգնութիւններ հասցուց անոնց: Սակայն 97 յուլիս 4ի դժբախտ ու տխուր արշաւանքէն յետոյ, գաղթականներուն արեւը մարեցաւ եւ սկսան փետուրի մը պէս օրօրուիլ պարսկական սփիւռնին մէջ: Մաքուի գաղթականները վտարուեցան մինչեւ Արաքս, ուր այս անգամ զոնքերը իրենց երեսին գոցուեցան: Սալմաստէն Թաւրիզ քաղաքը, սաբաբիկ, մերկ, անօթի ու ծարաւ, բայց իրենց արգիլուեցաւ Թաւրիզ մտնել, ու քաղքէն դուրս, հեռուն, գերեզմանոցին մէջ հազիւ կայք գտան — կենդանի մեռելներ: Ականատես եղայ իրենց տառապանքին, եւ այդ վիզը ծուռ, մերկ ու խզրտած ամբոխին ծայրագոյն թշուառութիւնը՝ տեսնողին մտքէն կարելի չէ որ ելլէ ա՛լ: Չմեռը Թաւրիզի շրջակայ Մուժուբար եւ Ալշամուլը գիւղերը անցուցին, սեւ օրեր տեսնելով եւ միայն կանանց Բարեգործական ընկերութեան ինամբը վայելելով: 98ի գարնան արդէն ցրումն էր դէպի այս ու այն կողմ: Հալածանքն ալ անպակաս եղաւ իրենցմէ: Մինչեւ 150 հոգի խոյի բանտը լեցուեցան:

Գաղթականները 5,000 էն աւելի թիւ մը կ'աւելցնեն Պարսկահայերուն վրայ: Կը լսենք որ վերջերս անոնց մեծ մասը մնայուն բնակարաններ հաստատուի են Սալմաստ,

խոյ, Ուրմի եւ Մարու:

Յանկալի Լր որ գաղթականներուն մէկ ժասն ալ տեղաւորուէր Սուլտուղի մէջ, ուր թէ՛ ընդարձակ հողեր կան մշակութեան, թէ՛ մեծ յարմարութիւններ՝ առանձին հայ գիւղեր սնննալու եւ թէ՛ միակ միջոցն է առիկա տեղին թրքախօս հայերուն մայրենի լեզու սորվեցնելու:

Վ. ՇԱՀԷՆԻ

ՕՐՈՒՆԱՆ ԿԵԱՆՔԸ

Ալեքսանդրիա, 10 ապրիլ 99

Անգիր քրտնիկ մը. — Մրախօս երեսփոխակը. — Նորագիտ լոյս. — Առեւտրեան մը ինչուսկերբ. — Փորձանք ժողովուրդ:

— Սուեի Պօղոս աղան ինչ եղաւ, կը հարցնէի օգոստոսեան ջարդէն ետքը Պօլսէն եկող առաջին ծանօթիս: Ինծի անանկ կուգար թէ Պօղոս աղան Պահճէ գաբուի իր պըտըտիկ խանութովը Պօլսոյ ազգային կեանքին մաս կը կազմէր, ուստի հետաքրքիր էի անոր ալ ինչ եղած ըլլալը զիտնալ: Հիմա Արմենիան կ'իմացնէ ծերուկին մահը: Լուրերու, հանդիպումի, յանձնարարութեան յամազրաւայր ջրավաճառի առ խանութին աներեւութացումը արգեօք ծակուկ մը բաց ձգած չէ՞ Պօլիս մեր հիմարութիւններու շարքին մէջ, ուրիշ սակայն ա՛յնքան բան պակսեցաւ: Օրն ի բուն, առաւրձնէ մինչեւ իրիկուն անոր առջեւն կ'անցնէին կը զանային էսնաֆը, աղքատը, հրապարակագիրը, հարուստը, եկեղեցականը, պատարկաշրջիկը, ժողովականը: Ամէն մէկէն բան մը կ'իմանար Պօղոս աղան եւ հետաքրքիրներուն կը հաղորդէր ըստ հարցումի, ըստ ճաշակի:

Հին բաներն ալ գիտէր: Յակոբ պատրիարքը տեսած էր, ամիրաները, անցած սերունդներու զբօղները: Ո՞ր թուականէն առ իտրչիկն էր. ո՞վ գիտէր: Մենք պենքը հոն գտանք, և մեր սնայնասիրութեանը մէջ կը կարծէինք թէ հոնկէ առ անգիր քրտնիկը մենէ ետքը եկողներուն ալ պիտի ըսէր, ինչպէս մեզի մեր նախորդներուն համար կ'ըսէր. «Հապա՛, ես անիկայ ճանչցայ նէ»: Բայց առաւրտին վստահութիւն չ'ըլլար, ըսած են, և ահա մենք ենք իրեն՝ իբր անյայտ աշխատակի մը՝ տեղ տուողդ այս արագասահ քրտնիկին մէջ, որ բիշ մը կը նմանի ամերիկեան վակոններուն ուր անխափր իրարու քով կը նստին անցագին վճարողները: Մեր անցագիրը հանրային կեանքի հեռուէն կամ մօտէն մասնակցութիւն մըն է, պղտիկ կամ մեծ, գէշ կամ աղէկ: Ու կարգապիւրը Դիպուածն է, որ ահա այսօր համեստ ջրավաճառին քով կը բերէ կը գնէ հոշակաւոր երեսփոխանը:

Չայրոյթի ինչ շեշտով արգեօք պիտի գրուէր այդ քրտնիկը եթէ Յարութիւն Մերեմ-Գուլի 1887էն 1893ի միջոցները մեռած ըլլար: Հիմա առ հին մեղաւորները տարիներու միջոցին մէջ կ'արուագծին ինչպէս առաջին համբաւուոր եղը որ ամբան որ մը ծարաւի եւ անօթութեան չզիմանալով վանքապատկան արաւն բանի մը թեղ խոտ բիրտնը առաւ: Ետքէն յիշուի սարերէն գալլեր իշան, անանք եզերը մուցնել առին: Եւ երբ այդ համբաւուոր երեսփոխանին մահուանը լուրը կ'առնեմ, միաբն կը գովածակի յիշել շէնքով շնորհքով մեզը մը անոր կեանքէն սրուն անունը պահ մը ձուլուեցաւ: Նարեանին եւ յօրինեց «Մերեմնուրեանգուլի» լծորգութիւնը:

Խրիմեանին պատրիարքութեանն էր որ Աղուլեցիի այդ զուակը մեր հանրային կեանքին մէջ երեւցաւ: Երեսփոխան ընտրուած էր ու խղճահարութիւն ցոյց կուտար ամբողջ բողոքելու, իբր թէ օրինական երեսունի տարիքը զիս թշուրած չէր: Ժգիտով մը, Հայրիկ հրատիրեց նորընտիր անգամը իր ազգային պարտականութիւնը կատարելու, «Խեղճից առաւելութիւնը տարիքից պակասը կը լրացնէ» վկայութեամբ մը: Երբ Մերեմ-Գուլի առաջին տանտախօսութիւնը արտասանեց, Օսեան ըսաւ. «Ահա նշանաւոր երիտասարդ մը». ու առեւտրանը նոյն իրիկունը իսկ իր տունը հրատիրելով հեար բարեկամացաւ:

Նշանաւոր խօսողի համբաւը միշտ վայելեց. յիսոյ մենք ալ շատ տարիներ լսեցինք այդ առեւտրախօսութիւնները սրտնցմէ իմաստ մը, ոչաք մը յիշողութեան մէկ բշխը մարտած ու մնացած չեմ գտներ: Իր բոլոր տանտախօսութիւնները կրնանք գտնել շարքն այն պերճախօսութիւններուն սրտնց ի լուր մեր կովկասեան եղբայրը սքանչացած կը գոչէ ցաւագին. «Օ՛հ, ինչ հիանալի խօսում են այս հոստանները, ափսոս որ ես ոչինչ չեմ իմանում»:

Մենք ալ ոչինչ չէինք իմանում. մա էր պատճառը որ անանք արաստանողը մինչեւ Ազգային ժողովի առեւտրապետութեան ամբողջ բարձրացաւ: Գուցէ: Մթութիւնը խորհրդատրին գորութիւնը իր մէջ սնի: Բայց Մերեմ-Գուլիի վերելքին ուրիշ տիտղոս մըն ալ օժանդակեց: «Այդ ամբողջ ահա ժողովրդի զակիկն է» կը գոչէր Փսփազեան ցնձագին երբ Սերվիչէնի, Տասեանի, Օսեանի զանգակը տեսու պարզունակ երեսփոխանի մը ձեռքը: Ան առեւտրեց Պօլսոյ վրայ ռամկավարական հով մըն էր սկսած փչել: Մեր մէջ «եկեղեցոյ զատակ»ը զիտնեք թէ ինչ է. ծնողքը անծանօթ տղան. բայց «ժողովրդի զաւակը»: Ինչ եւ է: Պէշիկթաշի գերեզմանատան խնդրը, Մահմանագրութեան ջնջումի փորձերը պարտաւորեցին Ազգային ժողովը վաղ անցնել ժողովրդին զակէն, և մըտաւորականի մը յանձնել իր զեկավարութիւնը: Մերեմ-Գուլի իջաւ առեւտրապետութեան ամբողջ:

* * *

Ու հիմա այն պահուն երբ լուրքեան մէջ զերեզման կ'իջեցնեն այն մարդը սրուն անունին այնքան յիշատակ-

ներ կապուած են, թուի թէ մարդ մըն է միայն որ կը բացակայի, եւ մենք 87էն 90 թուականներուն մէջ կ'ապրինք: Նորէն գերեզմանատան խնդիր մը, նորէն Սահմանադրութեան տապալումի ձեռնարկներ: Տարբեր դերասան, նոյն տեսարան: Ու տասներկու տարուան անցեալը իր ամբողջութեամբ վերակազմելու համար կաթողիկոսացումի խընդիւն ալ կը վերակենդանանայ: Եւ հիւր ա՛ն է որ կ'երեւի, ա՛լ այժմէութեան ամբողջ պատիւը իր մենաշնորհն է: Մինք ալ պարտաւոր ենք իրմով զբաղիլ: « Հարկս հարկելուրաց, պատիւս արժանաւորաց: »



— Ուրեմն Պապը...

Կաթողիկոսացումի խնդրին շուրջը մեր յուզումը տասներկու տարի առաջ այս հարցումովը կիսատ կը թողէինք միջակէտով մը: Կաթողիկոսութեան վէճերու մէջ հազար տարիէ ի վեր է վերջակէտ գնելու սովորութիւնը չունինք: Պահ մը Մուսա պէյ, Էրզրումի ջարդ, Գում-Գարուի ուրոտ, Էնկիլթի դատ, Սասուն, սարսափի տարիներ մեր ուշադրութիւնը զբաւեցին, կամ թէ՛ կարծես զբաւեցին, բայց հազիւ թէ արուն-արցունքով լեցուն աչքերնիս կիսախուփ բանալու կը համարձակինք, առաջին մտածութիւննիս կ'ըլլայ. « Ուրեմն Պապը... » կը նմանինք Սան-Ֆրանչիսկոցի աղջկան սրուն պատմութիւնը այս օրերս հրատարակուեցաւ: Նշանածին հետ վէճի մը պահունքունի մէջ կ'իյնայ ու կը նիրհէ տասներեք ամիս. երբ վերջերս կ'արթննայ, առաջին բառը ա՛ն կ'ըլլայ որով վէճը կիսատ թողած էր տասներեք ամիս առաջ:

— Ուրեմն Պապը Եկեղեցիին զը՛վին է թէ ոչ, Լուսաւորիչ Հոռոմ գաղա՛մ է թէ ոչ, Հոլին սուրբ « Ի հօրէ՛ բղխի » թէ՛ « Ի հօրէ եւ յորդայ »: Ահա խնդիրները որոնք այս օրերս տակնուվրայ կ'ընեն Լուսաւորչածին ու Սեղբոսորոտածին Հայերը, ճիշդ ինչպէս ասիկ տասը, տասերի տարի առաջ, ճիշդ ինչպէս անկէ ալ հարիւր, հարիւրքսան տարի առաջ, ճիշդ ինչպէս անկէ ալ մինչեւ ֆաղկեպոնի Ժողովին վաղորդայնը, ու հիմա ալ ինչպէս 1888-89ին, եւ ինչպէս ալ Տաթեւացիին տասներ, կունգակներ, շրջաբերականներ, հրակերներ իրարու կը բաղխին:

Ու այդ բաղխումներէն ալ լոյս մը կը ծագի, ինչպէս հին բացատրութեամբ մը « ամպերու բաղխումէն »: Կրօնական իրթնաբանութիւններն ալ մթազին ամպեր չնն: Հայկական սեւ երկնքին վրայ նոր մէտէսը մըն է ատլոյսը, որ էն առաջ վանցիներուն սրակնեայ աչքին տեսանելի կ'ըլլայ, եւ իրենց հրեղէն առաջնորդը կը դառնայ դէպի փրկութեան շտեմարանը:

Սովատանջ մահուան վտանգին մատնուած ատ խեղճերը կ'աղաչեն, կը պաղատին, կը գերբնկնան պատառ մը հացի համար: Բայց ամենքս ալ մահկանացու չի՛նք. անանկ ալ պիտի մեռնինք անանկ ալ. օր մը առաջ օր մը ետքը ի՛նչ նշանակութիւն ունի յաբտենականութեան

առջեւ: Թիֆլիսէն Պոլիս, Եգիպտոսէն թրակիա թուէր այն թէ հայ ժողովուրդը այս կուս արամբանութեամբ կը պատառնանէր սովեալներու կողմը: Ու ահա յուսահատ վանցի մը, պատմական ու աստուածաբանական վէճերու յիշատակէն ներշնչուած, « Ա՛հ, եթէ անգամ մը փորձենք կաթողիկոսացու սպանալի՛քը » կը ձայնէ: Կը փորձէ: Ու ահա արիւնոտ Հայութիւնը խենդ կը դառնայ. « Հա՛ց կ'ուզէք, վանցիներ, զբա՛մ կ'ուզէք, ի՛նչ կ'ուզէք, ամենքն ալ տանք, միայն կաթողիկ մի՛ ըլլաք: » Ազգային ցնցումը այնքան սաստիկ եղաւ որ մինչեւ իսկ վան երթալու յոժարակամ եկեղեցական մը գտնուեցաւ: Ղեւնդեանց օրե՛րն ենք:



Վան ու կաթողիկ անունները հիմա հայ հոգիներու մէջ իրարու ընդդիմահար, պահ մը զիս մտքով ու սրտով կը փոխադրեն Վենետիկի Մենաստանը ուր լճակ մը իր մէջ կը ցոլացնէ Միսիթարեան վարդապետներուն սիրտը. ու ատ վարդապետները կաթողիկ են: Վանայ լճին մանրանկարն է ատ, անոր խորշերովը, ծոցերովը, պտոյտներովը, — Հ. Ալիշանի սրտին ստեղծագործութիւնը: Երեսունըհինգ տարի առաջ շինեց զայն վարժարանցիներու պարակլին մէջ երբ անոնց վերատեսուչն էր: Վարժարանցի կը կոչուին ուսանող երիտասարդները որոնք Նորընծայրանէն վանքին բարձրագոյն վարժարանը անցած կը պատրաստուին քահանայանալու: Ամէն օր, ամէն ժամ բացակայ սիրելիի մը պատկերին պէս հայրենիքը կը յիշեցնէ ատ լճակը: Հայրենիքի սէրն ու կարօտը ուրիշ ո՛ր սարագիր հայու սրտին խանդակաթ այդ գաղափարը ներշնչեց:

Աչքին առջեւն է ատ լճակը ամէն անգամ որ կրօնական վէճը համաճարակի մը պէս յանկարծ երեւան կուգայ ու կը սարսռէ մեզի: Եւ տխրութեան այդ ժամերուն կը հարցնեմ ինքնիրենս՝ Ալիշանէն աւելի ո՞վ հայ. ու Ալիշանէն աւելի ո՞վ կաթողիկ: Ծայրայեղութիւն մը ուժգնապէս յայտնելու եւրօպական բացատրութիւն մըն է « Պապէն աւելի կաթողիկ » հեզնաբանութիւնը: Բայց իրաւալ Պապէն աւելի կաթողիկ մը կայ, Հ. Ալիշան. սակայն Հայիկէն աւելի ալ Հայ:

Բայց այս յիշատակներուն հետ մէկտեղ կը յիշեմ նաեւ 1869ի ամբան օր մը: Հ. Ղ. Վ. Ալիշան Ռաֆայէլեան վարժարանին մեր վերատեսուչն էր ան ատեն. ատ օրը տխրամած դէմքով մը, — կամ քանի որ խօսքը վանցիներէն բացուեցաւ — շրջուկ դէմքով մը, շեշտը ցաւազին, գառնութեամբ ըսաւ. « Հոռոմէն յանդիմանալիք եկած է. մեր աշակերտները շատ հայրենասուէր կ'ըլլան եղբր: Ախ, ամբաստանութիւնը Հասունէն է: »

Ու օրին մէկն ալ երբ Վենետիկի միաբանութիւնը վանահայր մըն ալ կ'ունենար Հոռոմ անոր կը զլանար Սիւնեաց արքեպիսկոպոսի անուանական անմեղուկ տիտղոսն իսկ, որ արքաներուն ժառանգութիւնն էր: Անիկա

Հայաստան կը բուրբեր: Օտարոտի շքանունի մը ճնշումին աակ պէտք էր Նլատել Մխիթարեաններու հայրենասիրական թոխը: Չեմ գիտեր հիմա թէ Ս. Ղազարի Աբբան ինչի՞նք Արքեպիսկոպոսն է, Սալամինայի՞ թէ Տրովպայի, ասանկ բան մը: Բազդատութեան եզր մը չե՞նք գտներ Վատիկանի եւ Երլարզի միջեւ: Երկուքն ալ հայկական անուններու գէմ իրենց թշնամութեամբ կը յայտնեն իրենց ներքին զգացումը եւ ձգտումը: Հայսն գէմ դաշնակիցներ են: Հ. Սուրբա Պարոնեան Մխիթարեան միարանութենէն բաժնուած օրը գոչեց. «Շատ կը սիրեմ վանքը, բայց աւելի շատ կ'ատեմ Հոռը:» Սրտի աղաղակ մը, շատ Հայու սրտի աղաղակ:

Վատիկանի եւ Երլարզի դաշնակցութիւնը ամբողջութեամբ համար Ազարեան Պատրիարք տասնեակ տարի առաջ խրատ հուտար Դրան նպատեղ Հայոց մէջ կաթողիկոսութեան տարածումին. «կաթողիկոսութիւնը ազգային զգացումը կը ջնջէ» կ'ըսէր: Անխոհեմ յայտարարութիւնը արձագանգ կը գտնէր եւրոպական մամուլին մէջ, եւ Արեւելք ալ դայն կը թարգմանէր. ան ատեն տակաւին կանխարգել զրաքննութիւնը հաստատուած չէր: Մեծ յուզում կաթողիկ Հայերուն մէջ. «Ո՛ր կը ասանի ուրեմն մեզի Սաղըզ-Աղածիի պատրիարքարանը» վրդովւումով կը հարցնէին ամենքը իրարու: Ազարեան պատրիարք այս անհարկի անդադանապահութեան հերքում տալ ուզեց, բայց անպաշտօն կերպով, պարզապէս թերթին խմբագրութեան կողմէ: Սիրաշահիլ ժողովուրդը, Հոռի առջեւ ձեռքերը լուալ. բայց խաղի եկաւ. ու հերքումը պաշտօնական ձեւի տակ հրատարակուեցաւ:

Բայց ուրիշ տեսակ հերքում մը եկաւ ետքէն. երբ 1890ը հնչեց, կաթողիկ հայերը, կաթողիկ պրոպագանդան աշակերաններ Յեղափոխութեան յառաջընթացներուն մէջ էին: Ու Եւրոպա քաղաքական աշխարհին առջեւ հայկական դատին աշխատողներուն պարագլուխներուն մէջ եղան հոյ կաթողիկներ: Բայց այս տեսակի կաթողիկներուն համար ալ էր որ Ազարեան պատրիարք օր մը հառաչանքով կ'ըսէր. «Չըլլային ասանկ կաթողիկները:»

Անկե՞ղծ վիշտ թէ վիւանագէտի հառաչանք: Առանց կեղծիքի վիւանագիտութիւն չ'ըլլար, ըսած են: Հաւանական է. ու Ազարեան պատրիարք ալ Վսիկէի վկայութեամբ, որ կը կրկնուի Նուպարի մահուան առթիւ, երեք պետական մեծ Հայերու կարգն է, Նուպար, Մկիթոֆ, Ազարեան: Ուստի իրաւունք ունինք տարակուսելով հարցնել, անկե՞ղծ մը թէ խորամանկ մը կաթողիկոսութեան այդ պաշտօնական ներկայացուցիչը:

Բայց եթէ Ազարեան պատրիարք խորամանկ մըն է որ իր ժողովուրդը պաշտպանելու համար սուլթանը կ'ուզէ թմրեցնել, ի՞նչ է ուրեմն Հ. Շարմըթան: Իբր հեղինակաւոր Փրանսացի, կաթողիկ Հայոց այդ բարեկամը կը հրաւիրէ Հայոց Եկեղեցին Հոռի հետ ի մի ձուլուիլ, իբր փոխաբնութիւն՝ անկախ Հայաստանի մը հեռապատկերը շողացնելով: Չեմ գիտեր ի՞նչ մտածութիւններ պէտք է պաշարած ըլլան սուլթանին միտքը՝ այդ տեսարակին պա-

րունակութիւնը իմանալուն, բայց հաւանօրէն մտածեր է. «Երկուքն մէկը վարպետորդի է, Ազարեանը թէ Շարմըթան:» Հաւանօրէն երկուքն ալ: Ո՛րքան ազմուկ մեր կողմէն Հ. Շարմըթանի տեսարակին շուրջը. բայց կարծեմ թէ թիրաքիտ մէջ կաթողիկոսութեան շահերուն նպատաւոր ծառայութիւն մը մատուցանելու սահմանուած չէ այդ հրաւեր-տեսարակը: Շատ խորամանկութիւն երբեմն շատ միամտութեան կը մօտենայ:

Շատ մը առողջ դատողութիւն, շատ մըն ալ ուղղամտութիւն, ահա՛ իսկական խորամանկութեան բուն սահմանը: Գոնէ Հայոց մէջ ճշմարիտ խորամանկը այս սահմանէն դուրս ելլելու չէ: Այս բոլոր Ազարեաններէն եւ Շարմըթաններէն աւելի խորամանկ չէ՞ր Պօղոս պատրիարքը որ իր բուրբարքը աղէկ կը ճանչնար, եւ հոգի վատրկելու վտանգները կը նախատեսէր: Օր մը երսուն երեք, երսուն չորս տարի առաջ Պոլսոյ մեր զարգացած դասակարգին մէջ գաղափար մը կը ծնի հայ կաթողիկ վարպետները լուսաւորչականացնելու: Ի՞նչ մեծ բարիքներ այդպիսի յաղթանակէ մը. կը ծաղկին վանքերը, կը տարածուի ուսումը Հայաստանի մէջ. պատրաստ զբաւաղուի մըն է, շահագործենք ի նպատակ Հայութեան բարգաւաճումին, կ'ըսեն: Պատրիարքին ալ դիմում կ'ըլլայ, այս նպատակին հասնելու միջոցները դիւրացնելու համար: Պօղոս պատրիարք միաշունչ իր շուպուխը քաշելով, ծուխի գոլորշիներուն մէջէն հեգնական ձայնով մը հատիկ հատիկ կ'ըսէ.

— Ճանճմ, աս մարդիկը տեղերինն բահած ձգեցէք. կ'աշխատին կոր, թող աշխատին. մեզի գան նէ ի՞նչ պիտի ընենք: Իշաւ մէկ խօսքն մը եկաւ զապթը չենք կրնար կոր ընել. ամենքը գալու ըլլան նէ ի՞նչ պիտի ընենք: Գլխուս փորձանք պիտի ըլլան:

Այս առողջ եւ պարզամիտ դատողութիւնը ընդհանուր քրքիշ մը առաջ կը բերէ, եւ խնդիրը կը փակուի: Օ՛հ, եթէ Հ. Շարմըթան ալ քիչ մը ասանկ մտածէ՛ր: «Ահա ավ մը կաթողիկ ունինք, ըսէր, ու զապթը չենք կրնար ընել: Աս Հասունի խնդիր է, աս ազատամտութեան խնդիր է, աս իրաւասութեան խնդիր է: Եթէ ամենքը գալու ըլլան, ի՞նչ պիտի ընենք»: Եւ իրաւ ալ տարակոյս չունենանք որ կաթողիկ եկեղեցին իրեն մեծ պատիժը պիտի գտնէ ան օրը երբ բոլոր Հայերը կաթողիկ ըլլան: Գլխուս փորձանքը պիտի ըլլանք: Վերլուծենք մեր ցեղին յատկանիշները եւ կը համոզուինք: «Հայերը կարգի, կանոնի, օրէնքի հպատակիլ չեն գիտեր» կը յայտարարէր 1885ին Ռուսիոյ ներքին գործերու նախարար կոմս Թոլսթոյ: Ահա մեր յատկութիւններուն, եթէ կ'ուզէք ըսենք թերութիւններուն, զլիւսուրը: Ու Հոռի եկեղեցին իրոտ կարգապահութեամբ միայն կ'ապրի:

ՀՐԱԶԳԻՆ

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Վ Ե Ր Յ Ո Ի Շ Ո Ի Մ Ն Ե Ր

Հ Ա Ն Է Ն Տ Ի Ն

Տիրէքլը արասը:

Պոլսոյ էն թրքատիպ թաղերէն մէկը, դաման ու այլամերթ անկիւն մը ուր մենէ քիչեր — Արեւելքով հիւանդներ — համարձակեցան սպրդիլ՝ Երզնի բռնաւոր մղումէն հրժարուած՝ Բամազանի իրիկունները: Սրճարանի մը լայն ու աճու սրահին մէջաեղը, կըր սեղանի մը շուրջ բոլորքը, արեւելեան երաժիշտներու ընտրուած խումբի մը կ'ընկերանայ Հանէնտէն: Պոլսոյ լաւագոյն խումբերէն մէկն է քիւնաւի թաղուսինը, ջութակի հոյակապ վարպետ մը այս խոշոր, ցաւագին աչքերով ու արբշտութեան կտորած հոգիով տարօրինակ ու սահմուկ Հայը, որուն անողոք ու մտերիմ, լլկիչ ու մխիթարող ճպտաբ տարիներէ ի վեր Վաստիի եզերքներէն մինչեւ Սթամպուլի գոհններուն խորը սրբական թրթռումներու սարսուռը կը պտտոցնէ: Հայ, յայն եւ հրեայ արուեստագէտներ, էն ծանօթներէն, երկիւղած յարգանքով մը կը շրջապատեն զինքը այդտեղ:

Հանէնտէն հոն է. ձախ ձեռքին մէջ յալած ձեւով մը բռնած իր տժգոյն տարիկն, աջովը՝ իր մատներուն անդուտ դուռանքներովը կը թրթռոցնէ զայն, իր յարկելակ ու հեշտաթաւալ ձայնին ելեւջներով ողողելով գործիքներուն արուեստական ներգաշակութիւնը, տիրապետելով անոր ու իր երգին մէջ հալեցնելով զայն:

Սրահին մէջ հաւաքուած բազմութիւնը, լուս ու երկիւղած, երազական աչքերով անոր պիչ, Երգ-Մարդուն ներկայութեամբը կ'իբնասանայ՝ իր կուռքին առջեւ անձնամուտ, իր աստուածութեանը առջեւ զարհուրած ու հակծիո հաւատացողներու մոլեռանդութեամբը:

Խարխուլ ու ճղճիմ՝ աթոռը՝ որուն վրայ նստած է ան, պատուանդան մըն է իրենց աչքին:

Գինով ու յափշտակուած, լալկան ու խելայեղ, յուսահատ ու երազամուլ, աչքերը թաց ու կիսախուփ, ձեռքը միշտ ծնօտին, նայուածքը նուաղկոտ ու հեւաւոր, յալտենական վիրաւորուածն է ան, Յաւին զաւակն ու երգիչը, Արեւելքի մեղկ, ու հիւանդ, ու հեշտախառութեամբ լեցուն Հոգին:

Անիկա ցաւագին տղան է զոր շտրեցին բաւական, ալեղ ու մոռցուած որբը որ չճանչցաւ հեշտանքը մայրական ու սիրայեղց ծիծերուն, ու իր ախտագին տարփանքը գնաց թոթուրտալ անյազօրէն՝ վարձակներու լուս, յոգնած ու թախմագին միտին մէջ:

Անիկա կեանքէն ճզմուած սիրտն է որ ըմբոստացումը շուզեց, ու հառաչեց միայն. կամաւոր համակերպողն է, որ անխնայ ճակատագրականութիւններու հալածանքին առջեւ ծոց ու ալ վեր շառաւ բնաւ իր դուն աթախ ու

փերուշան զուխը ու խանդաղատօրէն սիրեց իր հասնումներն ու տառապանքը:

Անիկա պիտոցոյն է մալլ ու ներսողամիտ, որ սրտերուն մէջը կարդաց ու մեր կօկիծը ըսաւ մեզի, ահարկու եւ մանկական երազատեղ որ կեանքին անշափելի տաժանքը պատմեց մեզի եւ Ունայնը բարձր յամառող ճիգերուն. առաքեալն է որ Արեւելքումն ու Երզնի կրօնքը բարոզեց, ու գինիով ու երգերով, արցունքով ու զառանցանքով դերագրողուած սերը փառաբանեց, Սէրը՝ գերագոյն սիսփանքը, գերաշոյն ապաւէնը, «արեւուն տակ» միակ ու իրական բարիքը, ճակատագրին անննդ ժպիտը, գոյութեան միակ նուիրական նպատակը, Սէրը՝ կոյս կամ ուղղծ, ուխտուած կամ կաշառուած: Անիկա բարձր ցաւերէն, բարձր յուսահատութիւններէն, սիրոյ բարձր խանտանքներէն ետ դարձած՝ վայելքին եսական ըզձանքը շարժեցուց միայն, այլ սիրոյ ճամբաներուն բարձր սոթանելի ուխտագնացութեան գերազանց ու արտում իմաստութեամբը ծանրաբեռն ու հանդիսաւոր սորվեցնողը եղաւ երիտասարդ, ինքնալստահ ու անփորձ հոգիներուն, ու ելբայրական կարեկցութեամբ մը ցուցուց անոնց բարձր վտանգները ու բարձր սոթանքը սիրոյ հետապնդումին, բարձր նենդաւոր համբոյնները, բարձր պատրուկ նայուածքները, բարձր մեծցնող խօսքերը, բարձր մատնող խոստումները, ինչպէս բարձր ինքնամատոյց ու զիւցազնական կրքերը որոնք կըսպասեն խորտակուելու, այրուելու: Անկեղծ համբոյրի մը անդին արձեւը ըսաւ ան, ու անգնահատելի յարգը անհաշիւ զրկեց խոտնումի մը, ու կիներ ցուցուց, կիներ՝ շարաշուք ու արդահատելի, զահիճ ու նահատակ:



Ու ստիկ կ'ընեն անոր՝ անշարժ ու հիացական: Գրեթէ ամբողջ Տաճիկներ են, զժնէ զէմբով խոշոր ալեղ մարդիկ, գէշ զեղնութիւններով: Մեծ մասամբ տարւօք մուլաններ են ասոնք, զանգալ ու ծանրաբարոյ, փաթմուած պատկառարկու խաղաղութեան մը մէջ որ պատարագորի ծիսական ծանրութիւնով մը կը զգեստաւորէ զիրենք:

Աչքերնին միայն կը մատնէ իրենց շփոթ ու խաւարտչին հոգիներուն խոփքը: Այդ աչքերը, յուզմունքէն տաժակացած ու արիւնստած, Հանէնտէին կը սեւեռին զմայլանքի պշտութիւններով:

Հոն չեն խմեր: Գինովութիւնը որ հոն կը յաճի ու կը կառչի կը պլլուի մթազնած ուղեղներուն, օղիին արուեստական բռնի օժանդակութեանը պէտք չունի բնաւ: Մարմարէ մերկ սեղաններուն վրայ, նարկիլէները կը ցցուին անոնց առջեւ, ու ծուխը որ անոնցմէ կը բարձրանայ պալան-պալան, բազիններու ողջակիզին սրբազան խոյանքը ունի, մինչ՝ սիրողաբար՝ հեշտամուլ շրթունքներու փակած օձակերպիկ մարբունքներէն զրկուած կլկլոցները, զողտուկէն, տարակայօրէն, կ'ընկերանան երսժիշտներուն անվերջ ու յարանորոգ համբոյրին:

Հապշտապ ու զիւահար եղանակի մը վազքէն յետոյ, ձգտուած, հոնդող նուագարանները յանկարծ կը հասնին, կը լռեն: Ծունչերը կը բռնուին, եւ սպասուած ու անձկութեան խորունկ լուսթեան մը մէջ՝ աչքերը ալ աւելի կը յառին պաղատագին: Գերազոյն վայրկեանն է աս:

Հանէնտէն վար կը գնէ տարիէն, աթոռին վրայ կը պրկուի, ձեռքովը ծնօտը կը գրկէ, ու խուլ, երկար, յուսահատ աղաղակ մը կը փրթի իրմէ:

— Աման, աման, աման...

Սարսուռ մը սրահին մէջ կը վազէ միահեծան, անուշորմ: Ու ունկնդիրներուն հեռաւոր կարգերէն սրտապասառ «ախ» մը կը թռչի բիրտ ու զանգուածեղ կտրծքէ մը, այրած «օֆ» մը կը յաջորդէ անկիւնէ մը, ու հառաչքի շունչ մը կը հեւայ մթնոլորտին մէջ: Տրտմաբեկ ձայն մը անդիէն ջերմեռանդ օրհնենք մը կ'ուզէ Հանէնտէին, «Ապրի»», ուրիշ մը՝ խենդեցած՝ «Մի՛ մեռնիր», ու ամենքն ալ, խելայեղ, — «Ալլահ...»:

Հանէնտէն, բռնաւոր, ա'լ լիագոր կը տիրէ հող, բուրբ այդ հաստ հողիներուն, որ իր սաքերուն առջեւ, իր զիւթական վանկերուն տակ կը գալարուին, կը հեծկըլտան, կը պաղատին, անձնատուր, անձնազոհ...

Ու Հանէնտէն Հայ մըն է, միակ Հայը դուզէ որ Տաճիկներ լացուցած ըլլայ:



Տրտում մանկութենէ մը ու աւելի տրտում պատանկութենէ մը ետքը, Հանէնտէն, արդէն երզին ուխտուած հեռաւոր ու խորհրդաւոր հակումներու բերումովը, իր հուզիին աւերակ ու թափուր գետնին մէջ՝ անոր հիւանդ ու մեռաւոր ծաղիկ ծլարձակումը գտած, կորուստի խելակի մը պէս անոր փաթթուած, անոր ապաւինած կը, ա'լ խաղաղ նաւահանգիստներու ճամբան ու կարօտն ալ կորսնցուցած: Ու օր մը գտան զինքը իր երզին հետ տեղաւորուած շրջուն երաժիշտներու խումբի մը մէջ, որ զինետան մը անկիւնը կը լեցնէր՝ ալմկալի ու տրտում շարձայնութիւններու յամառութեամբ մը: Իր ներկայութիւնը տարօրինակ ու նախախնամական պարզեւի մը պէս ուրախացուցած էր տեղին խոնարհ ու հասարակ ընտանիները: Գինովութեան խարխափումի մը մէջ հոն մոյրրած, հոն տախտապարած տանիկ էֆէնտիններ օր մը զինքը այդ տեղ երեւան հանած էին, ու բարեացակամ ու խանդավառ հրաւերներ զինքը հետզհետէ առած տարած էին փարթամ ու առատաձեռն բեռնակներ, որոնց յոյլ, զաղանի ու յայրատ ներսը լեցուցած էր հեշտահրաւեր թեւալորանքներու ու մազձոտ երազանքներու ներոյժ ու սպառող կեանքով մը: Իր երեստասարդ ձայնին թովշութիւնը զայրացուցած էր Սէլամլըքին կոյր, ահարկու ու մուշկան տոփանքը, ու զբան ետին կեցած շնչհատ Հարէմլիքին սարսուցանող իզականութիւնները՝ անհնարին բաղձանքներու դողովը մարմնի տուած էր:

Ու այս ա'լ շուրտող տենչանքներուն վայրագ մուսգը պատրաստելէն, հրահրելէն, բորբոքելէն յետոյ, ելած գացած էր ան՝ այլուր շարունակելու իր ճակատագրական արդաւանդ ու ցաւագին պաշտօնը, — տրտում միջնորդ որ ինք միայն անբաժին մնաց խնջոյքէն սրուն սեղանը ինք զրաւ: Եղկելի աշխատաւոր, որ ուրիշներու համար միայն ցանեց հրճուանքի հացը:



Հետզհետէ իմացան Հանէնտէին համար: Ա'լ անիւկա ամէն կոչունքի, ամէն զինարբուքի անհրամբշտ օժանդակը եղաւ: Չեռքէ ձեռք կը խլէին զինքը, ու Հանէնտէն չէր հասներ տեղացող հրաւերներուն: Օր մըն ալ երեւցաւ երաժիշտներու առաջնակարգ խումբի մը մէջ, ու մէկէն իր ժողովրդականութիւնը հաստատուեցաւ, հարկադրուեցաւ: Իր անունը ա'լ ամէնուն բերանն էր:

Տաճիկներ էին զինքը շրջապատողները իրենց հիացումովն ու գորովանքովը: Անոնց հետ, անոնց մէջ, անոնցմէ ապրելով, Հանէնտէն ա'լ կարծեւ անոնցմէ, անոնցը եղած էր: Իր ցեղը կարծեւ անօրացած, հալած էր այդ տարրին մէջ, սնուցելը իր էութեանը, զխաւոր ազգակը իրմէ բղխած զաշնակութեան, յենարանը իր կըող հողիին: Իր երգը անոնց ամբողջ երազը ու ամբողջ զգացական աշխարհն էր որ կ'արտայայտէր իւրաքանչիւր տարօրինակ կարողութեամբ մը: օտար ու եկամուտ հողի մը, որ այդ հրայրներու ու մեղկութեան զանգուածին պատուաստուած, իր արժանիքը անոր խորունկները արձակած, ծծելով ինչ որ ազնիւ ունի այն, անկից կը քաղէր իր ունձացումը, անոր զեղեցկութիւն մը կ'աւելցնէր:

Հիմա տարիներէ ի վեր ամենքը, իր զիւթութեանը մէջ բռնուած, մտիկ կ'ընէին իրեն: Ան միշտ իր երզին անձնատուր, իր իսկ ձայնէն զինովցած, յափշտակուած, զարնուած, անով վիրաւոր, իր կեանքին նաւաբեկութեանը մէջ՝ անոր պլլուած, անոր մէջ կը յաւեր լանար: Գորգուրանքով պաշարեցին զինքը, անոր ետեւէն գացին, հեւալով երբ ան կը հառաչէր, մտմտալով՝ երբ ան կը թելադրէր, յուսալով՝ երբ ան կը ժպտէր, խնծալով երբ ան կը յօնանար երբեմն՝ յուսահատի կարկառումով մը գէպի տարակուսական մոռացումը շնորհալի խնդուքներուն:

Այս անհաշիւ երկրպագումը տեւեց մինչեւ վերջին օրերը: Այն ատենները իսկ, երբ իրենց հողիին խորը միշտ կենդանի գաթան ու արիւնարբու բնազդները սկսեւր էին ծառանալ Հայերուն հանդէպ, այն շրջանին իսկ երբ անոնք պողթկացին կոտորածի ու աւերի մոլեգնութիւններով, երբ Չարհուրանքը եղան որ Պոլսոյ թաղերուն մէջ ման կուզար խելազար ու շղթայագերծ, երբ գարձան հեռաւոր տափաստաններէն իրենց հետ բերած առհաւուրթեան անանական ախորժակներուն, Հանէնտէն իրենց համար մնաց միշտ անձեռնմխելի, անհպելի Հայը: Անոր միշտ ողորդող երզին առջեւ իրենց կատաղութիւնը կ'ստրեցաւ:

ինկաւ դահաւիժօրէն, անոր դիմաց՝ իրենց հեռը մարեցաւ: Միւլեզգիները՝ ցորեկը մինարէներուն բարձունքէն խաւովածեան քինախնդիր աղաղակը ոռնալէն յոգնած, մոլլաները մզկիթներուն բեմէն ատելութեան ժահրը կոյր ու ծարաւ խուժանին ջամբելէ պարտասած, էֆէնտինները իրենց ահարկու դոներուն ետեւը, իրենց դժոխային որջերուն անկիւնները Հայուն կորուստը սաղորել խոնջ, իրիւնները եկան հանգչիլ այդ Հայուն ձայնին մէջ:

* * *

Ան սակայն ա՛լ առջի մարդը չէր հիմա:

Մեծ խոռոչը որ իր ցեղը ցնցած էր հիմէն, եկած գըսած էր նաեւ զինքը իր հեռաւոր մեկուսացմանը մէջ, արթնցնելով իր մէջ քնացող եղբայրութիւններու խանդաղատանքը: Ու այդ մարդուն մէջ որ ցարը կ'երգէր կեանքն ի բուն, զգայնական տարտամ՝ ու արտում՝ գինուլութիւններու անուշ ցաւը, իրենները զարնող բիրտ, իրական, կենդանի ցա՛ւը եկաւ մտուիլ, թխմուիլ հիմա: Հայն էր որ կը վերածնէր իր էութեանը խորունկներէն՝ ազգային հոգիին մէջ:

Իր անձպիտ դէմքը աւելի մթազնեցաւ: Խոժոռ ու դեւրագրիտ, պզտիկ բռուկ մը, աննշան շարժումէ մը կ'առնուէր, կը ձգէր կ'երթար, ու օրերով չէր երենար: Բայց իր էն խանդալտ ջերմեանները կը փնտուէին կը գտնէին զինքը, զինետան մը անկիւնը, օդիի մը սրուակին առջեւ, պառնացած ու նեղսիրտ, ու ողորելչ խօսքերով, ուսը ծեծելով, սիրաւ կը շինէին, ու զանի կը համոզէին դառնալու նորէն ձեռքը առնելու տարիէն: Ապրիլ պէտք էր վերջապէս, ու Հանէնտէն երգել միայն կրնար:

Բայց ա՛լ իր երգը միօրինակ ու լալագին աղաղակ մը եղաւ, բողբոջի ու զայրոյթի ճիգերով շաղապատուած, որ, յամառ ու անողորմ, ունկնդիր Տաճիկներուն քէֆը թունաւորեց, ու անոնց եղբանի սեւ հոգիներուն մէջ խղճիխայթին անգիտակից ու թանձր վրդովմունքը երբեցուց:

Ան, միշտ իր նոր մտածումին գերի, անոր պարաւանդուած, իր երգին մէջ պարզ ու այլանդակ միջոց մը գտաւ իր մորմոքը հեծծեցու ու իր վրէժը գոռալու: Իրարու ետեւէ, Հանէնտէն կ'եղանակէր ողբաձայն, իր գոց աչքերուն մէջ տեսնելով՝ հեռուն՝ զրկանքներու ու մահացու սպասումներու երկիրը, իր ոտնակոխ հայրենիքը,

Դժբաղդիկ այգիկն հատ մըն ալ չ'իյնար՝

Վերէն քի տեղայ մարգրիտ անհատար:

Յետոյ, յանկարծ, կը ցնցուէր, աչքերը խօշնայուած ըլլով մը կը սեւեռէր, ու էութեանը բովանդակ ուժգնութեամբ կը պոռար:

Հասի՛ր, ո՛վ դաշոյն,
Հասի՛ր օգնորեան.

Տարիէն իր կատաղութեան զայրացումին մէջ գողացող ձեռքերէն վար կ'իյնար: Ու ձայնը կը խոյանար, կը կայծակէր, կ'սրտտար, ու կը թուէր արդարապատ ճակատազրականութիւններու պատուհասը կանչել այդ տեղ հաւաքուած Տաճիկներուն բազմութեանը զլիւն:

ԱՐՄԷՆ ԶԱՐՊԱՐԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏԻ ԿՐԹԱԿԱՆ
ԳՈՐԾԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Ամերիկեան Պորտ ընկերութեան պաշտօնական թերթին՝ Միչընըրի Հերալտի՝ ներկայ տարուան թիւերուն մէջ շատ շահեկան եւ ուրախալի լուրեր կը գտնենք Հայաստանի եւ կիլիկիոյ մէջ կրթական գործին ծաւալմանը մասին: Ժողովուրդը ամէն ժամանակէ աւելի եռանդով զպրօցին կը փարի, եւ Պորտը իր ջանքերը չի խնայեր կարելի եղածին չափ գոհացում սալու համար այդ նորարժարձ տեսչանքին:

ՄԱՐԶՈՒԱՆԷՆ, Անպոլիա Գոլէճին տնօրէն Տր. Թրէյսի կը գրէ.

«Մարզումի գոլէճը հրաշալի կերպով առաջ երթալու վրայ է: Աշակերտներուն փութկոտութիւնը՝ իրենց զպրօցական վեցամսեայ թոշակը վճարելու, նորանշան երեւոյթ մըն է: Վերամուտքին (սեպտեմբեր) կը պահանջենք որ վեցամսեան կանխիկ վճարուի, ու ոչ մէկ ատեն այս տարուան պէս փութկոտութիւն տեսնուած էր թոշակները վճարելու: Վերամուտքէն տասը օր չանցած, զպրօցին գանձապահը 5000 տոլարէն (իբր 1000 ոսկի) աւելի ստացած էր վեցամսեայ թոշակներէն, առանց հաշուելու աղջկանց զիշերօթիկ վարժարանին վճարումները:

«Գպրօցին մէջ տեղ չկայ, ու ասիկա անտանելի է: Գոլէճին ու նախապատրաստական դասարաններուն աշակերտները իրարու վրայ խոնուած են: Նոյն բանը նաեւ բարեկամ հանդիսականներուն համար: Ամէն ուրբաթ իրիկուն հրապարակախօսութիւններ ունինք գիտական եւ գործնական նիւթերու վրայ, եւ քաղաքէն մեծ բազմութիւն կը փափաքի ներկայ գտնուիլ: Տեղ չկայ: Անցեալ իրիկուն Բրոֆ. Մանիսածեան շատ շահեկան հրապարակախօսութիւն մը ըրաւ հրաբուխներու վրայ, եւ ներկայ բազմութեան համար՝ մեր ունեցածէն երկու կամ երկուքուկէս անգամ աւելի ընդարձակ սրահ մը պէտք էր:

«Որոշած ենք տարեկան թոշակը 10 էն 12 ոսկիի բարձրացնել: Ասիկա կրնայ շատ շատ բնի մը պակասնէ աշակերտներուն թիւը, բայց վստահ եմ թէ ընդհակառակը պիտի աւելցնէ: Շատ հաւանօրէն, յառաջիկայ տարի զիմուներուն թիւը այնչափ մեծ պիտի ըլլայ որքան

այս տարի, եթէ ոչ աւելի: Չեմ գիտեր ի՞նչ պիտի ընեմ: Պէտք է ձեռուրնիս պատրաստ դրամ ունենանք նոր եւ յարմար շէնք մը կառուցանելու, եւ նպաստաւոր առիթ մը ներկայանալուն պէս, գործի սկիւնք եւ շինենք: Տեղական իշխանութիւնները շատ աղէկ են մեզի հետ, և կարծեմ ամէն ժամանակէ աւելի կը յարգեն գոլէճը: Վերջերս սաստիկ հրգեհ մը պատահեցաւ շուկան, ու 200 խանութ ալ բացան: Մեր գոլէճին տղաքները օգնութեան փութացին զպրոցին հրէջով, եւ իրենց աշխատանքը ամէնուն սքանչացման առարկայ եղաւ: Հետեւեալ օրը կառավարիչը շնորհակալութեան յատուկ նամակ մը գրեց ինձի, եւ հեռագրեց բարձրագոյն իշխանութեանց՝ ջերմապէս յանձնարարելով ուսուցիչները և անոնց առաջնորդը, ինքնօգնութեան Ընկերութեան պարագլուխը: Գործը է. Պոլսոյ թերթերուն մէջ արձագանգ գտաւ: Ասոնք կը յիշեմ, պարզապէս իբր նշաններ թէ հիմակ մեր գէմը յարուցւած խոչընդոտները քիչ քիչ բարձուելու երեւոյթ ունին:»

ՊԱՐՏԻՉԱԿԻ վարժարանին տնօրէն Տր. Չէմպըրը կը գրէ.

«Մեր ուսուցչական մարմինը երբեք այսքան կատարեալ եղած չէր. — հինգ առաջնակարգ ուսուցիչ՝ երկու օգնականով, բացի ինէ: Լուսաւորչական ու բողոքական հաւատարապէս կը գնահատեն մեր գործը: Պատրիարքը եւ ուրիշ բարձրաստիճան եկեղեցականներ աշակերտներ կը զրկեն մեզ, եւ վարժարանը կը յանձնարարեն լուսաւորչական ծնողներու: Գպրոցին բարոյական եւ իմացական վիճակը քաջալիրական է: Յաճախ աշակերտներուն մէջ առողջ փոփոխութեան մը նշաններ կը տեսնենք, առանց սակայն հաւատափոխութեան: Լուսաւորչական ծնողներ շատ անգամ մեզ կը գրեն թէ իրենց տղաքը մեզի կը զրկեն, որովհետեւ կը հաւատան թէ բարոյական կրթութեան եւ կեանքի մասին լաւ խնամք պիտի տրուի այստեղ անոնց:

«Ամէն կողմէ աշակերտ ունինք, է. Պոլսէն, Պրուսայէն, Ռոտտոթայէն, Պիդայէն, Տարտանէլէն, Ռուսուրքէն, Վարնայէն, Էտիրնէլէն, Ատարազարէն, Իզմիտէն եւ այլն եւ այլն, եւ այս տարի մէկ քանի ալ Եգիպտոսէն: Այս տարի 105 գիշերօթիկ ունինք, եւ ուր որ կարելի էր՝ անկողին մը դրած ենք: Շրջանաւարտներէն շատ քիչը բազմաթիւ ուրիշ գպրոց կ'երթան, մեր գպրոցէն ելլելէն յետոյ: Շատը ուսուցիչ կ'ըլլան, ուրիշներ իրենց հօրը գործին կը մտնեն, կամ գրագիր կ'ըլլան,] արհեստաւոր եւ այլն: Երիտասարդներու քրիստոնէական ընկերակցութիւններու կամ քրիստոնէական այս կարգի ուրիշ գործերու առաջնորդ կ'ըլլան, ուր որ հաստատուին:

«Անցեալ տարի 210 սակի նուիրեցիկնք աղքատ աշակերտներուն՝ գիշերօթիկի եւ կրթութեան թոշակներուն վրայ գեղջ ընդունելով: Այս գումարին 150 սակին Պորտը վրան առաւ, ու ասիկա արտաքին միակ նպաստն էր որ ունեցանք:

«Երբ 1891ին այս գպրոցը եկայ, աշակերտներուն թոշակներէն գոյանալիք հասոյթը 300 սակի կը հաշուուէր:

Յետոյ 500ի ելաւ, 800ի, և վերջէն 1000ի: Կը յուսամ որ այս տարի առ նուազն 1200 սակի գոյանայ: Է. Պոլսոյ առաջնակարգ վաճառականներէն շատեր իրենց աղքատ ազգականներուն եւ պաշտօնեաներուն տղաքը մեզ կը զրկեն, լիաթուշակ: Մեր աշակերտներուն մէջ առաջնակարգ վաճառականներու, բժիշկներու, քահանաներու զաւակներ կան: Մեր գասած յաջողութիւնը կը զարմացնէ զիս, ի նկատ առնելով մեր շէնքին խեղճութիւնը:»

Կեդրոնական թիւրքիոյ միսիոնարութենէն անուած նամակները շատ գոհացուցիչ սեղեկութիւններ կուտան կրթական հաստատութեանց վրայ: Միս Պէյքլի կը գրէ թէ ՄԱՐԱՇԻ աղջկանց գոլէճին այս տարուան աշակերտուհիներուն թիւը 54ի բարձրացած է, — ամէնէն բարձր թիւը որ երբեք տեսնուած էր: Տեղացի ուսուցիչները գոհացուցիչ են, բայց մեծ պէտք կայ գոնէ ուրիշ ամերիկացի ակնոյ մը որ երաժշտութիւն սորվեցնէ:

ԱՅՆԹԱՊԻ աղջկանց վարժարանը 100 աշակերտուհի ունի, 35ը գիշերօթիկ: Միս Ֆորմէն կը գրէ թէ նշարանները այնչափ լեցուն են որ առողջապահական տեսակետով լաւ չէ, բայց կարելի չէ ուրիշ կերպ ընել: Գիւլերուն մէջ մեծ պէտք կայ ուսուցիչներու, եւ զիւղացիները մեծ անձկութեամբ գպրոցներու բացման կը սպասեն: Վեց աղջիկ Մարաշէն Բէնապ եւ գիւղերը զրկուած են: Մարաշի Աստուածաբանական վարժարանը հինգ աշակերտ ունի, բայց 17 երիտասարդ պայման դրած են եկող տարի վարժարանը զալ թարսուէն, Այնթապէն եւ ուրիշ տեղերէ:

Պ. Սանաբըս, Այնթապէն, կը խօսի տեղացի երէցներուն կատարած արդիւնաւոր գործին վրայ, հակառակ ամէն կերպ գծուարութիւններու: «Հանգուցեալ Պատ. Ապուհա յաթեան, Ուրֆայէն, յաճախ կ'ըսէր թէ Գերմանիոյ մէջ միշտ յարաբերութեան մէջ գտնուած էր բարձր զարգացման տէր անձերու հետ, իր դասընթացքը աւարտած էր Պալի մէջ, և յետոյ եկած 25 տարի ապրած էր Ուրֆա, ուր, ինչպէս կ'ըսէր, ո՛չ մէկ մարդ կար որուն հետ կարենար խօսիլ այն նիւթերուն մասին որոնք կրթուած զարգացած հոգեւորականներու խօսակցութեան սիրական նիւթը կը կազմեն, երբ իրարու հանդիպին: Անշուշտ, Մարաշի ու Այնթապի պէս կեդրոններու մէջ, ուր միսիոնարներ կը բնակին, այդպէս չէ: Բայց մեր երէցներէն շատը իրենք իրենց հետ մինակ են, շատ քիչ գիրք ունին, սակայն միւս կողմէ միշտ ծարաւի են իմացական եւ հոգեկան հազորակցութիւններու զորոնք չեն կրնար ձեռք բերել: Հակառակ այս ամէնուն, իրենց կատարած գործը շատ արդիւնաւոր է:» Ու Պ. Սանաբըս կը յիշէ մասնաւորապէս Ատեամանի երէցը՝ Պատ. Վարդան Նաճարեան, եւ Հասան Պէյլիի երէցը՝ Պատ. Յակոբ Գունտաբեան:

Պ. Սանաբըս կը հաստատէ թէ Չարդերէն ի վեր ծագողներն մէջ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՍՏԻԿ ՏԵՆՉ ՄԸ ՍԿՍՍԻ Է: Լուսաւորչականները անխտիր կը դիմեն ուր որ միսիոնարները գպրոց մը կը պահեն, կարենալու համար գոհացնել այդ տենչը:

ՀԱՃԸՆԷՆ Պ. Մարդին կը գրէ. « Հիմակ տարին 135 ոսկի կը վճարենք մեր քարոզիչներուն եւ ուսուցիչներուն համար՝ մեր մանչերու վարժարաններուն մէջ: Այս գու. մարին 35 ոսկին միայն Պորտը կը վճարէ. մնացեալը մենք ճար ճարակ կ'ընենք կը դանենք: Այժմ 147 որբ ունինք մեր խնամքին տակ: Մեր մանչերու բարձրագոյն վարժարանին մէջ չորս ուսուցիչ ունինք, ամենքն ալ լաւ մարդիկ: — Մեր արհեստագործական ճիւղը յառաջդիմելու վրայ է, եւ մեր շատ որբերուն ու որբուհիներուն գործ կը հայթայթէ: Այդ ճիւղին տեսչութիւնը ժամանակիս մեծ մասը կ'անէ, բայց լաւ ու խոստմնալից արդիւնքներ կը սպասուին: » Պ. Մարդին կը յուսայ որ երեք չորս տարիէն այդ ճիւղէն գոյացած շահը պիտի կրնայ բաւել զպրօցներու քարոզիչներուն եւ ուսուցիչներուն ծախքերուն:

ԿԵՍԱՐԻԱՆ ՏՐ. Ֆարնուրթ կը գրէ թէ Կեսարիոյ շրջանակին միսիոնարական կայքերը այցելելով, անմիջապէս գործի գլուխ կանգնեցուցած է քարոզիչ մը եւ երեք ուսուցիչ, եւ բացած է աղջկանց երեք վարժարան, որոնք Պորտէն նպաստ պիտի ստանան:

Պողազլահանի մէջ, որ 3000 բնակիչ ունի, մէկ երրորդը Հայ, այցելուն տեսած է որ ժողովուրդը սաստիկ տենչ ունի զպրօց մը բանալու: Այցելուն խոստացած է օգնել, եւ դարձին նորէն Պողազլահանէն անցնելուն տեսած է որ արդէն տուն մը վարձած եւ զայն նորոգելու վրայ կին՝ զպրօց մը հաստատելու համար հոն:

Չաքմաք զիւղին մէջ, այցելուն խոստացած է տարեկան 10 ոսկիի նպաստ մը՝ եթէ քարոզիչ մը պահեն եւ մանչերու ու աղջկանց վարժարան մը բանան: Գիւղացիները սիրով ընդունած են, եւ մանչերու վարժարանը արդէն սկսած է:

Բէլլէրի մէջ, Տր. Ֆարնուրթ նոյնպէս միջոցներ տնօրիններ է՝ աղջկանց վարժարան մը հաստատելու համար:

Էյլէնճէի մէջ, նոյնպէս երիտասարդ մը ուսուցիչ կարգեր է:

Ինճիրի մէջ, շատ գծուարութիւններու յաղթելով, այցելուն ամէն կարգադրութիւն ըրեր է զիւղին զպրօցը վերաբանալու համար:

Գարձեալ Կեսարիայէն Տր. Տոտ կը գրէ թէ տեղացի երկու հայ եւ մէկ յոյն քարոզիչ մասնախումբ մը կազմելով՝ սկսած են աշխատիլ տեղացիներուն եռանդը արձարծելու: Ժողովուրդը արդէն մեծապէս կը շահագրգռուի այդ գործով, 10 ոսկի արդէն հանգանակուած է, եւ պատրաստ են զիւղի մը մէջ ուսուցիչ մը պահելու:

ԻՉՄԻԲԷՆ Պ. Պարզէզ կը հաստատէ թէ լուսաւորչական հասարակութեան մէջ ա՛լ առջի ոխը եւ թշնամութիւնը չկայ բողոքականներուն դէմ: Պուրտուրի մէջ, որ ժողովուրդը 1892ին այրեց միսիոնարական նորաշէն տունը, այժմ մեծ փոփոխութիւն առաջ եկած է: — Բացի Իզմիրէն, միսիոնարները հինգ կայք ունին նահանգին մէջ:

ՊՐՈՒՍԱՆ Պ. Պուրտուրի սքանչալիցումով կը խօսի

իրենց բացած որբանոցին յառաջդիմութեանը վրայ:

ՈՒՐՅԱՆ ՄԻՍ ՇԱՂՔԸ կը գրէ թէ մինչեւ ցարդ յաջողած է անօթութիւնը հեռու պահել իրենց խնամած խեղճ որբեւայրիներուն դէմ: Օրիորդը կ'ըսէ թէ 1100 որբեւայրիի եւ որբի գործ կուտայ միշտ: Տղաքը քաջաւոր է, ու կը յառաջդիմեն:

ԱՅՆԹԱՊԷՆ Պ. Մէրբիլ կը գրէ թէ լուսաւորչականներու եւ բողոքականներու միջեւ սերտ կապակցութիւն մը կը ափրէ այժմ:

Միշնըրի Հէրըտի վերջին թիւերուն մէջ մէկ քանի շատ գեղեցիկ լուսանկարներ կան: Մին Զէյթունը կը ներկայացնէ, այնպիսի կատարելութեամբ մը զոր երբեք տեսած չենք մինչեւ ցարդ հրատարակուած արի լեռնաքաղքին պատկերներուն վրայ: Զէյթունի մասին գրուած հակիրճ յօդուածը ու եւ է նորութիւն չի պարունակիր իր մէջ, մանաւանդ թէ, կը խոստովանինք, այդ տողերուն մէջ երեսուն եկած ողին շատ չենք սիրեր: — Զէյթունի հայ բողոքական հասարակութեան մասին կը տեղեկանանք այդ յօդուածէն թէ հիմակ ո՛չ միայն ինք կը հոգայ իր հանրային ծախքերը, այլ եւ 100 ոսկիի հանգանակութիւն մը ընելու վրայ է՝ իրենց շէնքը եւ քովի զպրօցները նորոգելու, ինչպէս նաեւ երիցատունը վերաշինելու համար: Վերջերս Զէյթունցի մը — առաջինը — Մարաշի մէջ երէց ձեռնադրուեր է:

Ուրիշ լուսանկար մը կը ներկայացնէ Տր. Բէյնուտի վանի որբանոցը, զրանը առջեւ, պատուհաններուն մէջ, տանիքին վրայ խոնուած հարիւրաւոր որբերով, որոնց թիւը 400ի կը մօտենայ: Տր. Բէյնուտս եւ կինը կը վարեն այդ մեծ հաստատութիւնը, մէկ քանի զերման բարեկամներու հետ որոնք մեծապէս օգնած են անոնց աշխատանքին եւ նպաստ հասցուցած են: Այդ զերման բարեկամները կը գրեն. « Եթէ կրկնապատիկ թուով որբ տանենք եւ կրկնապատիկ թուով մարդոց օգնենք, դարձեալ պէտքերուն չպիտի կրնանք համապատասխանել: » Ամբրիկայի հայկական նպաստամատոյց յանձնաժողովը, որուն կեդրոնն է Պար (Մէս), վերջերս մէկ քանի հազար տուրք յանձնած է՝ թիւրքիոյ զանազան կայքերուն մէջ բաժնելու համար:

Ուշադրաւ լուսանկար մըն ալ ան է որ կը ներկայացնէ Խարբերգի Եփրատ Գոլէնին ուսանողներու խումբ մը: Հաճոյքով կը դիտէ մարդ այդ պատանիներուն ու երիտասարդներուն գէլքերը, ուշիմ, բանիմաց ու քաղաքակրթութեամբ յղկուած, որոնց վրայ կը ճառագայթէ ներքին հասկցող ու զարգացած կեանքի մը գեղեցկութիւնը: Միշնըրի Հէրըտ ասոր իբր հակապատկեր կը դնէ ուրիշ լուսանկար մը որ կը ներկայացնէ երեք գեղացի կին իրենց տարազով, մին եզի մը վրայ հեծած, եւ ձերունի գեղջուկ մը: Պորտի պաշտօնական թերթը մատնանիչ կ'ընէ այն անհուն տարբերութիւնը որ կայ երկու խումբի

րուն միջև: Մենք, Հայու աչքերով դիտելով, այնքան արհամարհելի չենք գտնել այդ գիւղացիները, անտաշ թէև, բայց իրենց նախնականութեանը մէջ այնքան սրտառուչ: Մակայն առաջիններն ենք հրճուանքով ու երախտագիտութեամբ հաստատելու այն մեծ կերպարանափոխութիւնը զոր ամերիկացի միսիոնարները բերած են տարիներէ ի վեր Եփրատ Գոլէճէն անցնող հայ սերունդներուն իմացական ու ֆիզիքական ալ կեանքին մէջ: Ամերիկացիները, Եփրատ Գոլէճով ու Մարգուանի Գոլէճով միայն արգէն, այնքան մեծ գործ մը կատարած են մեր գաւառներուն մտաւորական մակարդակին բարձրացմանը տեսակէտով, որ առաջին տեղերէն մին կը գրաւեն աներկբայ մեր ցեղին յառաջգիւժութեանը սատարող բոլոր ուժերուն մէջ:

Լ. Զ.

ՀԱՅ ՏԱՌԱՊԱՆՔԷՆ

Տ Ի Ր Պ Ա Պ Ա Ն

Ասիկա մեր գիտցածը չէ, մեր Պոլսոյ բարի, վարպետորդի, այլանգակ ու անուշիկու տէրպապան, որ սէտիրին անկիւնը երկնցած՝ «Հա՛ օրհնած, հա՛ զաւակս» ըսելով օղիին դաւածները կը պարպէ ա՛յնքան անառակ վարի, անդիմադրելի մեղեներն ալ թալաթօսելով. որ շահաբեր ու «երջանիկ» ամուսնութիւններ սարքող խաւովն զերագանց ու միտաբան արուեստը իր կատարելութեանը հասցուցած է, և որուն դժուարաւ պարտկող սքեմին տակ անյաղթելիօրէն երեւան կուգայ յաճախ նախկին հովարտան կամ երէկուան շուկացին: Ո՛չ ալ սա միտ խոնարհ ու պատուական տերտէրը, որ մեր եկեղեցիներուն է՛ն խոնար խուցին մէջ լքուած, ժամկոչին եւ լուսարարին զրկից, իր պանդուխտի մոայլ ու տրտում կեանքը կը բաշքէ. որ մութուն կ'ելլայ, աւազբեցին ըսնը երկարելու խղճահար պարտածանաչութեամբը, ու Մաշտոցին զլուխը կ'անցնի, միտ մինակ, բոլոր ամառի առտուներն ու բոլոր անձայն անջերմեանդ իրիկունները լուր օրերուն, ճշմարիտ ու միակ արժանաւոր քահանան, որ զիշերը իր յոգնավաստակ ըսնը կ'ընդհատէ չբաւորի մը տունը, մահամերձի մը օգնութեան վազելու, որ ամէն օր Հաւատքին միթարանքը կը հասցնէ անժառանգներուն եւ ինկածներուն, որ չզիտցուած ու անյուզարկաւոր մեռելներուն վրայ կը ծոխ ու կ'աղօթէ ու զանոնք հոգը կը գնէ, սրտառուչ, ազնիւ, անձնուր, սքանչելի Ղարիպ-Տէրտէրը:

Զէ՛, սա Տէրպապան զատ ու եզակիան տիպար մըն է

մեր անկուսակրօն կղերին մէջ: Ու մէկէ աւելի են յատկանիշները որոցմով ան կը բաժնուի մեր տէրպապաներուն հո՛ծ ու իւրստ զանգուածէն:

Դիպուածին մէկ բարեացակամ բերումովը սա Տէրպապան Երոսպա, հարուստ գաղութի մը մէջ ինկած, սուքին տեղ ըրած է, քանի մը ջոջերու պաշտպանութեամբը: Այդ օրուրնէ ա՛լ ան գիտցած է իր գործը, իր զերին բոլոր կարեւորութիւնը զգացած, ու նոր ու լայն հորիզոններ բացուած են իր առջև:

Հազիւ գուրտ ելած իր մըլտած անկիւնէն, այս անակնկալ բաղդին հանդիպած ու անոր պլուած էր, ու չտեսի ռամիկ ու անխուսափելի շուարումէ մը վերջը տեսած էր լուսաւոր ճամբան ուրկից պիտի քալէր՝ առատութեան, վայելքի ու պատիւներու կեանքով մը:

Թեւերը ստաթած ու գործի սկսած էր:

Ու չորեքթաթ երկրպագութիւն մըն էր որ սկսաւ, ուրկից երբեք վեր չառաւ իր սրբագօծ մօրուքը, տեղին բոլոր ունեւորներուն առջև, որոնք իր մէջը երանութեամբ դասած էին բոլոր շոյալող հաճոյակատարութիւնները, բոլոր կանխող հաւանութիւնները, բոլոր անպորտող չքմեղանքները, բոլոր նուիրագործող օրհնութիւնները:

Իտէալ հովիւը եղաւ ա՛լ ան այդ եսական ու տղեկ հողիներուն: Անոնց սեղանին զլուխը բաղմեցաւ, անոնց հացին ներքողը բրաւ, անոնց զաւակները շոյից, ու մեկնեցաւ խոստանալով ամենքն ալ զատ զատ յիշել կիրակի օրը պատարագին սեղանին առջև:

Դիշերը առանձնացաւ երէցիկին հետ, ու մոռացումի ու արբեցումի երկար ժամեր յամեցան պատելու, զգուշելու՝ փայփայելու տարփողաբար Ոսկիին Տոպրակը որ կ'ուռնար, կ'ուռնար, կ'ուռնար:

* * *

Մէյ մըն ալ հեռուէն, Հայրենիքէն, աղէտքի գուժեր հասան իրարու ետեւ: Իր ցեղին կոշկոճմանը եղբրական հոնդիւններն էին, յուսահատութեան ու քայքայումի ազիտորով աղաղակներ որ կուգային իր ապահովութեան երկաթէ վոններուն զարնուիլ, իր խափանած հողիին բերանաբաց խաղաղութիւնը ամպտել աւելորդ ու անօգուտ հոգերով: Անոնց անվերջանալի ու դժնդակ խուժումը կըրցաւ սակայն քչիկ մը վրդովել իր փուսած հանգիստը, տարտամ խղճի խայթի պէս բան մը արթնցնել իր ուրիշ տենդերէ բոնուած որտին մէջ: Ու Տէրպապան տրտմեցաւ, չնեղեց իր հայրենակիցներուն այդքան դժբաղդ ու այդքան թշուառ ըլլալ: Վերջապէս յանցանքը իրենը չէր: Վերջապէս այս բաները զինքը զբաղեցնելու, իր թանկագին ժամանակը զոգնալու չէին: Ամէն մարդ իր մտառուքը ունէր: Ամէնուն ցաւը իրեն կ'օգտէր: Այդ մարդիկն ալ...: Զէին մի կրնար հեծկտանքնին խեղդել ու արցունքնին կուլ տալ:

Խեղճ Տէրպապան: Պատահեցաւ որ զիշերները երբեմն տարտամօրէն մտածէր այս բոլորին: Պատահեցաւ

որ նայն իսկ իր արժանապատիւ կողակցին կարծիքներ հաղորդեր — իրենց սիրական մտահոգութենէն պահ մը ակամայ բաժնուելով — Հայրենիքին արհաւիրքներուն վըրայ: Երէցիկինը շուարած, սահմակած իր էրկանը այս անակնկալ վիճակէն, մայրական այլալուսներ ունեցած էր անոր առջեւ, ու փութացած էր զանիկա խաղաղել սիրալի կշտամբանքներով:

— Մեղք ես, Տէրպապա, այգբան մի՛ յուզուիր, Ազգին հոգը քեզի՞ կն տուեր, — մենք մեր գործը նայինք...

Ու կնոջական զմայլելի խելանիւթեամբ մը, ցատքած բերած էր, իր չոր ու ամուլ կուրծքին վրայ հոգեւին սեղմելով, Ոսկիին Տոպրակը, զայն Տէրպապային գիրկը տուած էր գուրգուրազին, մէկ հատիկ զաւկի մը պէս:

Ու Տէրպապային առաքելական բարեհամբոյր զէմբը ներքին խորունկ ու անպատում՝ երանութեան մը յորդալոյս ճառագայթումովը պայծառացած էր: Օ՛հ, Հայաստանն ու իր ցաւերը...

Ու երկուքնին, զէմ գիմաց, երկար ժամեր, սիրատու չոր նայուածքներով պարուրած, շոյած, փայփայած էին Ոսկիին Տոպրակը որ կ'ուռնար, կ'ուռնար, կ'ուռնար...



Մութ ու անձրեւոտ իրիկուն մը, ուշ ատեն, Տէրպապային գուռը զարնուեցաւ մեղմ, անվստահ հարուածներով, որոնց յաջորդեց՝ սեմին վրայ տախտապարող զանգուածի մը խուլ, գծնդակ ձայնը:

Տէրպապան վառարանին առջեւ գաղջ երջանկութեան մը մէջ՝ ընկողմանած, թանձր ու հեշտ սլի մարտողութիւն մը կ'որոճար այդ պահուն զսուլութեան ու յղիացումի հեւքով մը, իր նայուածքէ այրի աչքերը տարտամ անկիւններ պտտցնելով: Վայրկեան մը ակամայ ու տաժանելի շարժում մը ըրաւ երթալ Գուռը բանալու, բայց ճիգը ահազին էր, ու Տէրպապան սպասեց, Կժուարին որոշումի մը առջեւ վարանոտ:

Քանի մը լուռ ու երկար վայրկեաններ անցան:

Տանը սեմին վրայ նորէն խլրտում մը լուռեցաւ ու այս անգամ չախչախի պահանջկոտ հարուած մը եկաւ Տէրպապան իր տեղէն խախտել:

Դժգոհ ու կասկածոտ, Տէրպապան ոտքի ելաւ ու զէպի գուռը ուղղեց իր զանգաղ ու ապստամբ քայլերը: Պահ մը կանգ առաւ անոր ետին: Տէրպապային ստիպութիւնն էր ոչ մէկուն բանալ իր գուռը, առանց առաջուց աղէկ մը հասկնալու այցելութիւն ով ըլլալը ու այցին նպատակը:

Չախչախի երրորդ բուռն հարուած մը զինքը ցնցեց իր երկբայութեանը մէջ: Զգուշաւորութեամբ զինուած ձեռքով մը, Կիւրազնորէն, կէս մը բացաւ գուռը ու նեղ սիրտ շեշտով մը՝

- Ո՞վ է ան:
- Օրհնեա՛, Տէ՛ր...
- Խոպոտ ու յոգնած ձայն մըն էր մութին մէջէն ելլող:
- Ի՞նչ կուզես, առ ատեն...

— Խեղճ եմ, անօթի եմ, Հայ եմ...

Ու սեւ զանգուածը նորէն ինկաւ սեմին վրայ: Պալլացող լոյս մը եկաւ դրանը բացուածքին մէջ սրպարելի: Երէցիկինն էր որ հետաքրքիր ու վախկոտ նայուածք մը եկած էր համարձակիլ Տէրպապային ունն ի վար:

Ան ատեն, մութին աղօտ լոյսին մէջ երեւցաւ այցելուն:

Տէրպապան ու երէցիկինը սոսկումով մը ընկրկեցան, ու մարդը թիզ մը աւելի շարժեցաւ վէպի ներս:

Տարուք ու հատած կերպարանք մըն էր, ուր խեղճութեան աղբրեկ մօրուք մը կը խոռանար շուրջանակի: Աչքերը մայր կեանքով մը կը պալլային իրենց անդնդացած խոռոչներուն մէջ: Ամբողջ ձմրան մը անձրեւէն խիում ողբալի լաթերու տակ՝ իր խեղճ մարմինը կը կմախանար ոսկրուտ ցցուածքներով: Տարապայման խոնջէնք մը կը կըր, կ'ընկճէր հոգ իր ամբողջ անձը:

Հեռուներէն կուգար կոր, ու արիւնոտ արհաւիրքներու մէջէն վագեր էր շնչասպառ: Վտանգէն հեռու, Մահէն ճողպրած, քայլամուր թափառեր էր, երկար ատեն, օտար, անանօթ ու մահացու ճամբաներու մէջ: Ու ա՛լ ու՛ չուներ քալելու: Կեանքը ակուններուն մէջ սեղմած, ա՛լ կ'իյնար, կը խրէր հոգ, նաւահանգիստը հասած ըլլալու ցաւազին վտահուլութեամբ: Նաւահանգիստը, իր եկեղեցին, իր ազդին տունը, իր տունը, ուր կը հաւատար որ պիտի ընդունէին զինքը, ներս պիտի առնէին, իր էութեան մարած կանթեղը պիտի վառէին, եւ սր պիտի հանգչէր ինք՝ խաղաղութեան ու մխիթարութեան երազուած զիշեր մը ամբողջ:

Դռան բացուածքէն փչող պաղ հոփ մը ինքզինքին բերաւ Տէրպապան, որ իր բոլոր վտահուլութիւնը նորէն գտած:

— Ի՞նչ ինկեր ես հոգ, պտտաց:

Մարդը կրկնեց:

— Տէր հայր, խեղճ եմ, անօթի եմ, Հայ եմ...

Տէրպապան համբերութիւնը կորսնցուց:

— Է՛ ես ի՞նչ ընեմ. քեզի ո՞վ բուս որ հոս դաս, աս ատեն մարդ անհանգիստ կ'ընեն. Ելիր բանդ զնա՛:

Ու երէցիկինին կանալով,

— Ոչ յՄատուճոյ երկնչին, ոչ ի մարդկանէ ամաչեն:

Մարդը մօտալուտ ու վերջնական լքումին վախովը կենդանացած, ուժովցած, ոտքի ելաւ եղբրական ու ահարկու:

— Ի՞նչ կ'ըսես կոր, Տէր հայր, ի՞նչ կ'ըսես կոր, ձգէ՛ ներս մտնամ, քիչ մը հանգչիմ, քիչ մը տաքնամ, անօթի եմ՝ ըսի քեզի, շնն հասկնար կոր, ձգէ՛ ներս մտնամ:

Ու իր հէզ, անզօր բազուկներուն ամբողջ ճարովը հրեց բացաւ գուռը կանակի վրայ:

Տէրպապան կատղեցաւ, իր հուժկու թեւերը սպառնալից շարժումներով երկնցուց, ու առաջ նետուելով՝

— Դուրս կորի՛ր, թշուառակա՛ն, չէ նէ հիմա քեզի բոլիսին կուտամ: Հոս Հայաստան չէ՛: Հայա՛է՛, ի՞նչ կեցեր ես...

Մարդը շուարած, խորտակուած, զգեստնած, ստիպա-

կոխի յանկարծական ուշաբերումով մը հասկցաւ մաքա-
սումին անկարելութիւնը իր դէմ, իր կտոր մը կեանքին
դէմ ցցուող ամբարտակին լիթիարի անսղօքութեանը հետ,
ու համակերպութեան կսկծալի շեշտով մը՝

— Տէր հայր, կեցի՛ր, սէր երթամ, հասաւ տեղը մարդ
չեմ ճանչնար... պարէ տեղ մը ըսէ երթամ պառկիմ աս
գիշեր... պատահ մը հաց տուր ուտեմ, անթի՛ր եմ,
կը մեռնիմ կոր... Տէր հայր...

Բայց Տէրպապան ա՛լ մտիկ չէր ընէր:

— Կորի՛ր, կորի՛ր, անիծեա՛լ, կորի՛ր...

Ու ինքիւրմէն ելած, իր երկու կարշնեղ թեւերուն մէջ
բռնեց, թօթուեց խեղճ-մարդը, ծունկի վայրագ հարուս-
տով մը վար հրեց զայն սեմին սանդուխներէն, ու մոլեղ-
նաբար զարկաւ դոցեց գուռը անոր քիթն բերնին:

Գուրսէն հագիւ լսուող, խեղզուած տրտունջ մը: Հայր
կանգ առաւ փողոցին մէջ, այլակերպած աչքերով դիտեց
պահ մը եկեղեցիին զանգուածը որ հող, մութին մէջ, կը
ոտուերադժուէր, յետոյ անդին դարձաւ ու անդալրում
անձրեւին ասկ սիտաւ քալել...

* *

Տէրպապան ազատուի հառաչանք մը արձակեց երբ
սենեակը վերադարձաւ: Վառարանին մօտ գնաց, ծոցեալ
կրակը խոսնեց, ու զուարթ բոցերուն առջեւ, քանաբէին
վրայ տարածուեցաւ նորէն: Կը զգար թէ կորովի խոշոր
վառնում մը բրած էր, բայց դէ՛հ էր իր յաղթանակէն:
Ու գալարող հեշտանքով մը երեժտակաց, բերնին անձաւա-
յին խոռոչէն ձայնարկելով՝

— Փառք քեզ Տէր, փառք քեզ...

Յանկարծ սաքի ելաւ, տենդոս ու թեթեւ քայլերով
սենեակէն դուրս փութաց, սանդուխէն վեր վազեց: Ու
պահ մը վերջը ներս կը մտնար բեռնաւորուած, խըն-
զումերես:

Ոսկիին Տոպրակն էր:

Ու Տէրպապան կրակին առջեւ, երկար ատեն, գոգին
մէջ շոյեց, սեղմեց, փայփայեց, խանդաղատագին, Ոսկիին
Տոպրակը որ կ'ուռնար, կ'ուռնար, կ'ուռնար...

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԻՆԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ
ԹԻՒՐԲԻՈՅ ՄԷՋ

Րիչարդի րոյաւիցը կը գրէ Կ. Պոլսէն.

Տասնեակ տարիներէ ի վեր Թիւրքիոյ մէջ առեւտու-
րը կառավարութեան կողմէ երբեք այնքան արգելքներու
հանդիպած չէր որքան վերջերս: Այդ խափանարար դրու-
թիւնը առուտորի այս ինչ կամ այն ինչ ճիւղին դէմ ուղ-
ղուած չէ. տեղական արհեստագործութեան դէմ այնքան
արգելքներ կը յարուցուին որքան գուրսէն բերուած ապ-
րանքներու վաճառականութեան դէմ: Իրերու այս կացու-
թեան դէմ արտունջները ընդհանուր են, եւ նախընտրու-
թիւն մը ցոյց չի արուիր այս ինչ կամ այն ինչ ազգայնու-
թեան համար, թէպէտ՝ ի նկատ առնելով Քոյուղերին եւ
սուլթանին բարեկամութիւնը՝ կը կարծուէր թէ գերման
վաճառականներուն աւելի աղէկ աչքով պիտի նայուէր:
Այդպէս չէ սակայն, եւ գերմանական գեսպանատունը ա-
ռեւարական մանր մունր այնչափ խնդիր ունի ձեռքը որ-
քան միւս պետութեանց գեսպանատները: Բոլոր գեսպա-
նատները, առանց բացառութեան, խնդիրքներ կ'ընդունին
վաճառականներու կողմէ որպէս զի «պաշտօնական ա-
ջակցութիւն մը» շնորհուի իրենց՝ կառավարութեան հետ
ունեցած գործերնուն մէջ, բայց նոյն իսկ այս «պաշտօ-
նական աջակցութիւնը» շատ չնչին ազդեցութիւն մը ունի
թիւրք իշխանութեանց սիսդէմագիք խափանարար դրու-
թեան վրայ: Մարդ չի հասկնար թէ Թիւրք իշխանութիւն-
ները ինչ կը յուսան ձեռք բերել իրենց այդ ընթացքով:
Կ'ըսուի թէ պզտիկ պաշտօնեաները կ'աշխատին իրենց
ժրջանութեանը ապացոյցը տալ՝ օտար վաճառականութիւ-
նը խափանելով: Հաւանօրէն, սիսդէմի պակասը որ կը սիրէ
թիւրք վարչութեան մէջ, իրական պատճառն է իրերու
արդի կացութեան. ոչ մէկ պաշտօնեայ ո եւ է նախաձեռ-
նութեան պատասխանատուութիւնը կ'ուզէ ստանձնել նոյն
իսկ ամէնէն աննշան խնդիրն մէջ, եւ այդ խնդիրներուն
կարգադրութեանը համար կայսերական իրաւէ մը պէտք
է, որ շաբաթներու ու ամիսներու կը կարօտի:

Թէպէտ ինչ որ ըսուեցաւ՝ առաւել կամ նուազ կը
պատշաճի կառավարութեան ամէն պաշտօնատներուն,
բայց վաճառականութեան դէմ յարուցուած այս արգելք-
ները ամէնէն աւելի զգալի են մաքսային վարչութեան մէջ,
որ, անշուշտ, ամէնէն աւելի գործ ունի օտարներուն հետ:
Այդտեղ վաճառականութեան դէմ յարուցուած խոշըն-
դտաները այնքան մեծ են որ մեծ ու փոքր բոլոր պետու-
թիւնները մտադիր են հաւաքական ճիգ մը ընել՝ այս կա-
ցութեան դարման տանելու նպատակաւ: Դեսպանները
արդէն գումարում մը ունեցան եւ հաւաքական ծանու-
ցադիր մը գրուեցաւ՝ կառավարութեան ուշադրութիւնը
հրաւիրելու համար մաքսատան մէջ օտար ապրանքներու
դէմ յարուցուած գժուարութեանց վրայ: Մանուցադիրը

կը գանգատի մասնաւորապէս մաքսատան գնահատիչներու վարժունքէն, եւ կ'եզրակացնէ ըսելով որ զեսպանները գործը իրենց կառավարութեան պիտի յանձնեն եթէ Դու որ հարկ եղած բարւոյնները չմտցնէ: Տարակուսելի է թէ այս ձեռնարկը փափաքուած արդիւնքը պիտի ունենայ թէ ոչ: Հաւանորէն պարզ զիտողութիւններէ աւելի բուն միջոցներ հարկաւոր պիտի ըլլան՝ թիւրք կառավարութիւնը մզելու համար որ փոխէ իր արդի ընթացքը առեւտրական գործերու մէջ: Այս հաւաքական ծանուցագիրը կանխելու համար, սուլթանը յանձնախումբ մը անուանեց՝ «Մաքսատան արդի վարչութեան մէջ բարեկաւութիւններ մտցընելու» համար: Սակայն, ըստ սրում թիւրքի մէջ սուլթանութիւն է յանձնախումբ մը կարգել երոսր որոշուած է որ բան մը պիտի չըլլուի, յանձնախումբին անուանումը զոհացուցիչ տպաւորութիւն մը առաջ չբերուի:

ԼՈՒՐԵՐ

«Հայաստանի Բարեկամները» ապրիլ 4 բռնակաւով իրենց Կ. Պոլսոյ գանձապահէն հետեւեալ նամակը ստացած են՝ որբանոցներուն փակման մասին.

«Փետրոսար 1ին, Տիարպէքիի կոչասկալը գոցեց մեր Բաշաի տունը ուր 30 որբ կը պահէինք: Եոյնպէս գոցել տուաւ մեր Չեքոչի տունը, ուր 60 որբ և որբունի հաշարած էինք: Եոյնպէս Բաշաի մէջ Գերմաններուն պահած 140 որբերը ցրտեցան, ինչպէս կը գրեն մեզ Խարբերդի, եւ տղաքներուն արգիլուեցաւ լոյն իսկ քաղաքը մնալ: Տիարպէքիի մէջ Գերմաններուն հաշարած տղաքն ալ ցրտեցան. մեր 140 որբերուն ձեռք չըպցուեցաւ, բայց անոնց արգիլուեցաւ ու եւ զիրք ունեւալ իրենց տունը: Ասուք միակ որբանոցներն են որունց ձեռք ըպցուցած են թիւրք իշխանութիւնները:»

— Լոնտոնի մէջ գրոյց մը ելած ըլլալով թէ Կալլէսի իշխանը Կ. Պոլիս պիտի այցելէ, հակառակօր քարոզիչ Տր. Բարքըր՝ այս օրերս գոչուարուած ժողովի մը մէջ՝ կատաղի կերպով իր զայրոյթը յայտնեց այդպիսի պատանակաւորութեան մը դեմ, առանց լռելի յիշատակելու սակայն:

«Երբ իմացայ թէ Քայգերը Արեւելք գացած էր եւ ընթրիքի յետոյ ձառի մը մէջ «Բարեկամս սոչութեան» բաները գործածած էր, ապշած մնացի: Ամօրով ու սարսափով վար նստայ, մտքիս աւելեւ թերեւով Մեծ Մարդասպանը, նախատի՛նք քաղաքակրթութեան: Ան որ քամանրեց ամեն քրիստոնէական զգացում եւ յաղթեց միացեալ Եւրոպային, կրնայ Քայգերին բարեկամը ըլլալ, բայց մեր բարեկամը չէ, իմ բարեկամս չէ: Անկի՛ն այդպիսի խօսքերը. թո՛ղ ժողովրդի՛ն ձայնը շտախ այս պարագային մէջ: Ու եւ թարեկամութիւն չեմ ընդունիր այդ մարդուն հետ որ արիւնով ոտոգեց հողը, մարդիկ, կիներ ու տղաքներ սրակոտոր ըրաւ, արգանդը իւրեց, սաղմը սոչի՛ն անցուց,

եւ ամեն գազանոտրի՛ն ի գործ դրաւ: Յանուն Աստուծոյ խօսելով Մեծ Մարդասպանին վրայ, կ'ըսեմ. «Աստուած թո՛ղ դժոյքի մատեն Սոչութեան»:

— Անգլիոյ խորհրդարանին մէջ, արտաքին գործերու նախարարութեան խորհրդակալ Պ. Պրոտրիք, նարցման մը պատասխանելով, յայտնեց թէ Կ. Պոլսէն արդէն հրաման գացած է վերաբանալու Տիարպէքիի, Բաշաի եւ Չեքոչի որբանոցները: Պ. Պրոտրիք լայնեց սակայն Չեքոչները, այնպէս որ չենք գիտեր թէ տեղին փակուած որբանոցին մասին ի՛նչ տեղեկութիւն եղած է:

— Կ. Պոլսէն կը գրեն «Տէյի Թեյիկրաֆ»-ի. «Վերջերս հրատարակուած լռելիք թէ ոստիկանութիւնը գրաւեց է հայ աղօթարքեր, միշտ չէ: Ինքզինքը գործի վրայ ցուցնել ուղղող ոստիկան մը հայ ժամագրքեր գրաւած էր՝ պատրուակելով թէ Հայաստան բաւր կար անոնց մէջ, բայց սոչութեան, եղելութիւնը իմանալու պէս, անմիջապէս արգիլեց այդ գրաւումները:»

— Յայտնի չէ որոշակի թէ Եհեմէի մէջ ի՛նչ կանցելի կը դառնայ կոր: Բայց մերք ընդ մերք երեւան եկած տեղեկութիւնները ցոյց կուտան թէ ապստամբութիւնը միշտ կը շարունակէ: Անգլիոյ թերթերը կը ժանոցանեն թէ թիւրք գործերը վերջերս ծանր պարտութիւն մը կրեր են Քոչի մօտ եւ տո քաշուեր են: Ամբողջ թիւրք վաշտ մը բնաջինջ եղեր է:

— Թալասի (Կեսարիա) հայ եւ յոյն բողոքական հասարակութեան մէջ «Խաշարին դեմ Լոյս» անունով ընկերութիւն մը կազմուած էր երեք տարի առաջ, նպատակ ունենալով Աստուածաշունչը զրկել հերանոսներուն: Եոյն կիս մը ոսկի մը տուած էր, եւ մանր մուշկեր անոցներ սկսեցին գալ ամեն կողմերէ: Երեք տարուան մէջ իբր 20 ոսկի զրկուած է այդ նպատակով Ճարուն, Չիւնաստան, Հեղիաստան, Ափրիկի, եւ սրտագին պատասխաններ ստանուած են: Գործը պահ մը զարկեցաւ, երբ թիւրք կառավարութիւնը «ընկերութիւն» բառին գործածութիւնը անգամ արգիլած էր: Վերջերս սակայն նորին սխառ է, և այս անգամ 6 ոսկի զրկուած է Չիւնաստան, Ճարուն եւ Հեղիաստան՝ ծանօթ միտնաւորներու:

ՈՒՇԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՆՈՐ ՀԱՍՑԷԻՆ

ՀԱՍՑԷ. ՈՒ ԲԱԺՆԵՂԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկից զրկել առ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեկիցն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 վեցամսեայ 1 սոլար: